Ս Ո Փ Ե Ր Ք

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

Ժ. (10)

ՆԵՐԲՈՂԵԱՆ

ՅՈՐԴԻՍ ԵՒ Ի ԹՈՌՈՒՆՍ

ՍՐԲՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

ՌՅԳ — 1854

ՅԱՂԱԳՍ դարձի իմոյ բարբառոյ , և տկարութիւն անձին իմոյ նուազ-եալ կատարեցուցանէ 'ի յօժարութե-նէս . յայսմ առ Աստուած ասելոյ , և սէր որդոցն փութացուցանէ . բայց անարժանութիւն իմ ոչ տայ համարձակել . վարանեալ գամ յերկիւղաց , և տարակուսեալ 'ի մէջ ծփանաց . երկնչիմ 'ի մեծու-թենէ իրիս , և զարհուրիմ 'ի հեղ-գութեանցն սպառնալեաց . փու-թամ յուսով և սիրով 'ի գաղտնա-կուածն բանիս , և հրաժարեմ 'ի պատահական պատուոյս : Մեծ է սէր քան զամենայն . և զամէլի զատանի երկեւղ յորժամ ոչ լինի ընդ աստանձնաց . բաղդամ են պատա-ճառք լռութեան , և յողով կատա-կածանք արդելման . նուաղեալ է

ժամանակ, և ցամաքեալ սէր բազմաց։

Վասն որոյ ոչ ինչ խափանումն եպերանաց տեսանի 'ի յանդգնելոցն յաջողութեամբ ընդդէմ այնոցիկ, որք 'ի հոգս իւրաց հանդիսանան. այլ որ անօրինելոցն է՝ անօրինեսցի. և որ բարկանալոցն է՝ բարկասցի կարծմտութեամբ և նախանձու զինեալ վշտով. զի տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան յիւրաքանչիւր միտս որոշեալս և զանազանեալս. որ քննէ զսիրտս և զերիկամունս։ Այլ ինձ բանս յառաջեսցի, և սուրբքն պատուեսցին գովութեամբ, և Աստուած փառաւորեսցի։

Եւ զի քահանայական է տօնս, քահանայից և խրախուսութիւնս. համազգեաց ինդութիւնս, հովուապետաց հանդէսս. վասն որոյ մանաւանդ պատուելի է 'ի մէնջ. զի մերազնեայք գոն կոչնատէրքս. և առաւել երախտաւորք հովիւքս սուրբքս. հարք հոգեւորք, ծնօղք բարեփառք. առաջնորդք յաջողակք.

նուաստութիւնք խնամութեանք, հանդիպա-
ցեալք նորահրաշք. առաքինեալք
երանաւէտք՝ բազմադիմի երկնայինք
ծնանելով, և մեծագոյն սիրոյն սը-
նուցանելով, զորդիսուցելոցս անձինս,
հաստատելով վերստին ՚ի յոյսն
կենդանին ։

Իւ արդ զի՞նչ հատուցացուք փո-
խարէնս երախտեաց հարցդ հոգե-
ւորաց. կամ զորպիսի՞ տրիտուրս
տացուք ընդ մեծագոյն վաստակոց
աշխատելոցն ՚ի մշակութիւնս հո-
գեւոր գործոց. զի թէ զամենայն
ուրբս տատուել տատուէր ընկա-
լաք, որչափ եւս առաւել զհա-
մարձակ առաջնորդս մեր և զծնողս
զմեզ հոգեւոր շնորհիւ. զի թէ
յընտանիս հաւատոյ հրաման առաք
գթալ, և զայնն ոչ դարձուցանել ՚ի
զաւակէ ազգատոհմի ըստ դրեցե-
լումն, արդ քանի՞ եւս հարց մերոց
հոգեւորաց պարտաւորեալք շնորհակա-
լուք լինել տնտեսութեանց գթա-
ծաբար, զի մի գտանիցիմք ընդ ապե-
րախտիցն և ընդ անշնորհակալաց բա-
րերկրելոցն ։ Զի ոչ կարեմք ՚ի գոր-

ծառայութեն ըստ արժանոյն՝ 'ի տկա-
րութենէ առացաւ լինել անձին. իսկ
ոչ կամելն ձեռնամուխ լինել ըստ
բաւականին, յանհաւատութենէ
առուգեալ եղեւ. այլ հաւատով և
սիրով յօժարելն՝ հաճոյ է Աստուա-
ծոյ և սրբոց իւրոց. և թէ այս այս-
պէս է հաւատա՝ որպէս և է իսկ,
ապա բարւոք է, քան 'ի քուն թան-
ձրութեան խորդալ ծուլութեամբ,
աշխատասիրութեամբ յօժարամիտ լի-
նել 'ի գործ. և ըստ այսմ պատրաստի
ձեռնամուխ լինիմք յիրս. թէպէտ
և կասեալ գտանիմք յարժանւոյն.
զի քան զոր տայ Աստուած՝ առա-
ւել ոչ պահանջէ. և ոչ սուրբքն
եպերեն զըստ կարողութեան հան-
գիտացեալն. այլ սիրով հաճու-
թեան ընդունին և վարձս հատու-
ցանեն։

Եւ արդ որովհետեւ զպատ-
ճառն 'ի բաց մերժեցաք զպատճա-
ռասիրաց, եկայք այժմ սիրելիք՝
մտաց աչօք յառեցուք 'ի հանդէս
սրբոցն. և դիտեսցուք որչափ և է
կարողութիւն՝ զերանելեացն զմե-

ծուլութեան շնորհէին . Թէպէտեւ կարօտա-
ցեալք փոքր 'ի շատէ ընծայաբեր լի-
նել տրոցն . զի կոչնականքն միշտ ա-
ւուրս հանդիսին եւ պատճառանք ժո-
ղովոյ՝ ոչ մի ոք կամ երկուք 'ի
հարց բարեփառաւոց , այլ յոլովից
վէհից եւ պատուաւորելոց անձինք .
հովուաց եւ հովուապետաց հաւա-
քումն . քահանայապետից քահա-
նայապետաց , եւ պատուական ճգնաւորե-
լոց մեծութեամբ . Արիստակէս եւ
Վրթանէս , Յուսիկ եւ Գրիգորիս .
ընդ որս եւ մեծն Դանիէլ սքանչելի
երեւեալ , յայլազգա ցեղէ՝ բարի
արդասաւորեալ առ այսպիսի միացեալ :
Եւ այսքան երանելեացս զորոց զ.ժ.շա-
տակս անուանակարգեցի , յառաջա-
բանակս այլ բերէն յառաջեալք , ան-
ձանձրելի վաստակոց քրիստոնէից՝ զծառա-
ւի անդու մանուց մերոց առաջեալք
յառաջասածային հոմանացն վառա-
կաց : Տունկք աննչալիք 'ի մեծա-
գոյն բուրաստանէն բողբոջեալք .
բարունակք բերքնաւորք 'ի հայկա-
կան որթոյն ուռ շառաւիղեալք .
ծաղկիկք ծիրանեփառաք , 'ի ծովայ-

ին ծոցոյ ծաղկոցէն ընձիւղեալք · պտուղք գեղեցիկք 'ի բարիոք արմատոյն բարւոք բոլորեալք , քաղցրահամք և վայելչազարդք · ցանկալիք և քստմնելիք · արեանառուք՝ հօրն արփիածագ · պերճացեալք պատուով վեհագոյն · թագակառոյցք և թագաւորազունք · բանիբունք և բերկրահամբոյրք · քարոզք պատուիրանին ճշմարտութե , և քաջամարտիկք 'ի պատերազմի ընդդէմ այսոցն չարութեան · խօսեալք առաջի թագաւորաց ըղվկայութիւն տեառն ամենայն համարձակութեամբ , և նահատակեալք ճշմարտաքարոզ վարդապետութեամբ · քահանայական շնորհիւ պսակեալք , մարտիրոսական հանդիսիւ պայծառացեալք , վկայական անուն ժառանգեալք , 'ի գանձ տեառն յաւելեալք , և յարքայութիւնն երկնից փայլակնանման երեւեալք · դասակիցք դասուց անմարմնոց , և փառաբանիչք փառաց բարձրելոյն ։ Արիստակէս մեծ քահանայապետ , մեծափառ հօրն փո-

խանդարդ. բաս գրեցելումն՝ փափա-
նակ հայոց եղեալն որդւոց. ոչ միայն
ժառանգ հայրենիք աշխարհոյն, այլ
և որդւութեանց վարուց՝ հօրն հա-
ւատարմոյ զաւակ. մանաւանդ թէ
և կուսութեանց առաւելեալ եւս
քան զնոյն. ուստի հոգեւոր երե-
ւեալ ճշմարտապէս բանիւ վարդա-
պետութեան. անխափանաւ յան-
դիմանութեանց՝ յանձնամատուցանելոց ա-
ռաջնորդաց ՚ի վերայ պատուիրանի
տեառն խորհրդեալ՝ առաքելաբար
զմահ ընդունէր, ՚ի կտտանս կեն-
դանեացն թևակոխելով. զի միշտ
կենդանի զոհով Աստուծոյ բա-
տերօղեամբ հրամանին. յեկեղե-
ցիս անդրանկաց գրելոց ՚ի յեր-
կինս ՚ի վերինն Երուսաղէմ որ է
մայր մեր ամենեցուն. յաղագս ՚ի
վայրապարշ վերգոմամբ, հաւաք առ
Երրորդութիւնն. ուր սերովբէիցն
դասք, քերովբէիցն գունդք, աթո-
ռոցն ջոկք, հրեշտակացն հոյլք.
ճշմարտապէս անդ և քահանայա-
պետն մեր սուրբն Արիստակէս. ուր
և փառաւորեալ խմանալի ձայնակցու-

Թեամբ ընդ երկնայնոցն դասուց զքահանայապետն Քրիստոս զփառաւորեալն ընդ Հօր և Հոգւոյն անքննելի ձայնիւ յաւիտեան ։

Սա էր 'ի կառուցման 'ի վիմին հաւատոյ 'ի Նիկիական հարցն հաւաքումն՝ փոխանորդ հօրն առաքեալ 'ի Հռովմայեցւոց մեծադահութիւննն. մեծափառ և զարմանալի հրաշիւք անդ փառազարդեալ. 'ի մէջ բազմախումբ հարանցն սրբբոց հանդիսաւոր երեւեալ. 'ի վերայ կապուտակ ալեացն լայնատարած լճին լիութեան վեհաւէտ և քստմնածածան կորովակի սեքաշարժ Թանձրութեամբ ջուրցն Ովկիանոյն՝ սիգաքայլ ոտիւք սրընթացութեամբ սխրացեալ, անվեհեր դիտմամբ յիսուսաբար 'ի նկատեալ տեղին հասանէր ։ Ոչ պետրոսօրէն երկմտէր, այլ փրկչաբար խիզախէր ։ Եւ ժողովելոց հարցն բազմութեան՝ սխրալի հիացումն տանէր. և զանդրադարձութիւնն եկաւորութեամբ՝ ոչ տարակուսանօք ինչ հայթայթէր, կամ յառաջար-

կեալ [illegible] [illegible] · այլ նոյնա-ձեւ օրինակաւ [illegible] 'ի հաստատուածն [illegible] [illegible] · որ և [illegible] [illegible] մինչեւ ցայսօր ժամանակի [illegible] ե-րեւեալ 'ի վերայ [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] · և [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և է [illegible] · [illegible] և [illegible] [illegible] միաբանութեամբ [illegible] [illegible], որ [illegible] է յամե-նայնի · այլ և [illegible] [illegible] և [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible], սա 'ի միաբանութեան [illegible] և 'ի [illegible] [illegible] : Յորոց [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] · [illegible] [illegible] [illegible] է 'ի [illegible] և 'ի [illegible] և 'ի գործս [illegible] [illegible] [illegible] : Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի գործս [illegible] [illegible] [illegible] · [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

վուրդք հաւատացելոց, փառաւո-
րեն զհայրն երկնաւոր զտուիչն
այնպիսի իշխանութեան մարդկան:
Սա դառնայր 'ի ժողովոյն Նիկիայ և
գայր յաշխարհս Հայոց մեծաւ
հանդիսիւ, շնորհօք Հոգւոյն սրբոյ
զօրացեալ, հանգունատիպ փրկչին
մերոյ Յիսուսի դառնալոյն զօրու-
թեամբ հոգւոյն 'ի Գալիլեա. և
ելանէր համբաւ զնմանէ ընդ ամե-
նայն կողմանս գաւառաց ուր և
հասանէր. որք ասէին՝ Այս այր է
որ իշխանութեամբ սաստէ հողմոց
և ծովուց ըստ օրինի փրկչին Յիսու-
սի և հնազանդին սմա: Նա և այսոց
պղծոց հրաման տայ և ելանեն. և
զամենայն ցաւս տապաքինէ 'ի մարդ-
կանէ զօրութեամբ տեառն իւրոյ:
Որք լուեալ բերէին զամենայն հի-
ւանդս և ախտաժէտս և ընկենուին
առ ոտս նորա և բժշկէր զամենե-
սեան. և տեսեալ բազմաց զեղեալ
սքանչելիսն, տային փառս Աս-
տուծոյ և ասէին, որպէս լուաք՝
սոյնպէս և տեսաք: Եւ այսպիսի
մեծասքանչ հրաշիւք և չքնաղագեղ

Ճոխութեամբ զայս հասանեմք յաշ-
խարհս Հայոց , ընթերցեալ ընդ ին-
քեան զշնորհս հաւատոյ զեղեալն 'ի
մեծի ժողովոյն . և մատուցանեմք
հօրն խորհրդով սրբոյն Գրիգորի և
մեծի Թագաւորին Տրդատայ .
որք մեծաւ աշխատութեամբ ընկա-
լեալ ընթերցեալն , և յաւելուածն 'ի
նոյն բանս պատշաճի , խնդրելով 'ի
ատեանսն՝ զի 'ի նոյնն հասարակաց կաց-
ցեն մասանցն իւրեանց միաձայնեալ
ժողովուրդք ։

Սա կացեալ զինի հօր իւրոյ մե-
ծին Գրիգորի յաթոռ Հայրապետ-
տութեանն ամս եւթն , բարուք մի-
աբանութեամբ և Ճշմարիտ վար-
դապետութեամբ յանդիմանելով
զչարսն . և որպէս ասացաւ՝ յԱրիս-
տոսէ ամբարշտէ բանսարկուէ վասն
սատանայական յանդգնութեանն՝
որով զմահ ընկալեալ , հասանեմք
խնդութեամբ առ Քրիստոս , առ
որ անձկացեալն էր 'ի մանկութե-
նէ . ասելով , Տէր ոչ զոք սիրեցայ
յաշխարհի , բայց միայն զքեզ . և
թէ , Թողաք զամենայն և եկաք

զկնի քո, և զբանն քո պահեցաք ճշմարտապէս. տուր մեզ զողորմութիւն քո. այսպէս վճարեաց զկեանս սուրբ հովիւն մեր. սուգ մեծ թողեալ վիճակելոց իւրոց. որոց վասն աղօթէ միշտ առ տէր ասելով. Զգործս ձեռաց քոց մի անտես առներ։

Իսկ զկնի սորին երանելւոյն Վըրթանէս հարազատ եղբայր սորա. ոչ միայն ըստ մարմնոյ, այլ և ըստ հոգւոյ եւս՝ առաքինութեան նորին գոլով համեմատ, բազմադիմի պատուով պանծացեալ. որ և ուղղափառ վարդապետութեամբ զճըշմարտութիւն միշտ քարոզելով, հաստատեր եւս կրկին անգամ իւրով յօժարական երկամբք զաթոռն թագաւորական, բարեպաշտութեամբ և ուղղափառ հաւատով զարդարեալ. կայսերական պատուով պանծացեալ, և 'ի պատիւ սրբութեան չքեղացեալ. յառաջադէմ յամենայն գործս բարութեան, արիագոյն 'ի վաստակս առաքինութեան։ Զբարեմիտան

յորդորելով 'ի գործս բարիս, և ըղձարան յանդգնեցանելով բանիւն ճշմարտութեան. արդարև քանան հաւատոյ և չափ աստուածպաշտութեան և հեզահոգութեան յամենայնի ճանաչէր. 'ի մարմնի միշտ կենդանի վկայ Քրիստոսի. սպանանելով զանդամս զերկրաւորս ըստ առաքելոյն բանի: Անմարմնաբար ճգնութեամբ, ճշմարիտ քաղաքավարութեամբ, ուղիղ վարդապետութեամբ և բարւոք վերակացութեամբ՝ զանձն օրինակ տալով բազմաց և նպաստակ բարեաց զկնի եկելոց, ըղձալի մարդկան և հաճոյ Աստուծոյ:

Յաւելեալ 'ի հարս հայրապետան, 'ի քահանայս քահանայապետան, 'ի հովիւս հովուին քաջ, որ զանձն իւր միշտ եդեալ էր 'ի վերայ հօտին, 'ի ճգնաւորս անմարմնաբար ճգնելոյն. 'ի վկայս՝ հանապազօր մեռելոյն աշխարհի. որոյ աշխարհ 'ի խաչ ելեալ էր՝ և ինքն աշխարհի: Ի մարտիրոսս՝ միշտ մարտուցելոյն 'ի վերայ պատուիրանացն Աստուծոյ. 'ի

նահատակն՝ հանապազօր նահատակեալն ըստ հաճոյից Աստուծոյ. 'ի մենամարտս՝ բարւոք մարտուցեալն ըստ օրինի տեառն. 'ի սիրելիսն Աստուծոյ՝ միշտ անձկացեալն առ նա սիրով. որ միշտ փափագէր զելանելն 'ի մարմնոյ աստի և զլինելն առ Աստուած. որ հանապազ գոչէր ընդ մեծին Դաւթի բաղձալի սիրով, Ե՞րբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ: Վաղագոյն հրաժեշտ խընդրելով յախտալի կենացս ցանկալին վերնոց, և մեզ յոյս բարեաց առ Աստուած և պարծանս առ մարմնակից մարդիկ. որ և բարեխօսէ միշտ առ տէր վասն հօտի իւրոյ աստ մնացելոյ:

Այլ և շառաւեղ սորին սրբութեան մեծայոյսն և յուսոյ ժառանգն. որ յոլովագոյն յուսով յուսայր 'ի յոյսն առատապարգեւ. յուսով կարդալով զանուն Աստուծոյ զյոյսն ամենեցուն յօգնականութիւն յուսացելոց 'ի յոյսն բարի, Ճշմարիտ քահանայապետն Յոյսն յորջորջեալ. փոխանորդն

հօրն աթոռոյն, և նախանձաւոր նարին առաքինութեան։ Նաև զնախանձ ուրուք յանձին կրելով հանգոյն մեծին Եղիայի. 'ի վերայ պատուիրանացն Աստուծոյ նախատակեալ նման մեծին Յովհաննու մըկրտչի։ Վրէժխնդիր փառաց փըրկչին մերոյ Քրիստոսի, որդւոյն Աստուծոյ վկա ճշմարտութեամբ. հովիւ հոգևոր՝ հօտին Քրիստոսի, արդարեւ տեառն նմանեալ, զանձն դնելով 'ի վերայ ոչխարաց, գորովագութ սիրով հոգայր մեծապէս վասն փրկութեան հօտին իւրոյ. գթածաբար գոչէր առ բարեգութն և ողորմածն Աստուած, Մի մերժեր զմեզ յողորմութենէ քումմէ. մի ցրեր զուխտս քո. մի 'ի բացէ առներ զողորմութիւնս քո 'ի մէնջ. մի մատներ զմեզ իսպառ վասն անուանդ քում սրբոյ. այլ զերծո զմեզ յորոգայթէ որսողին վասն Գրիգորի սիրելւոյ քո, և վասն Ռստակիսի ընտրելոյ քո. և Վըրթանիսի սրբոյ քո. յիշեա տէր ըզԳրիգոր և զամենայն հեզութիւն

նորա. որպէս երդուաւ տեառն և ուխտս եդ Աստուծոյ իւրոյ, թէ ոչ ելից 'ի խորութեան վիրապէս և 'ի միջոյ թունաւոր գազանացս. թէ տաց քուն աչաց, կամ նինջ արտեւանաց. թէ տեսից զլոյս արեւու, մինչեւ զաւետիս ընկալայց փրկութեան ազգիս այսորիկ. թէ բերկրեցայց սրտիւ, մինչեւ գտից զտեղի արկանել հիմն տաճարի տեառն 'ի դաւառիս յայսմիկ: Եւ արդ տէր, յիշեա զուխտ վաստակաւորին քո. և զնեղելոց անձանց պաղատանս մի անտես առներ. տուր փառս անուան քում որ փառաւորեալդ ես յաւիտեան: Անձինք նեղեալք և հոգիք ձանձրացեալք յանօրինաց յարուցելոց 'ի վերայ մեր, աղաղակեմք առ քեզ Քրիստոս փրկիչ մեր. լուր ձայնի աղօթից յուսացելոցս 'ի քեզ. և փրկեա զմեզ 'ի հալածչաց մերոց. զի քեզ փառս վերառաքեսցուք ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ:

Այսպիսի գորովագութ սիրով աղօթէր քաջ հովուապետն մեր և արի երջանիկ ծնօղն ըստ հոգւոյ երա-

նելյն Յուսիկ 'ի վերայ ծառին իւ-
րոյ . այսպիսի արտօսրագոչ պաղա-
տանս մատուցանէր առ Աստուած
վասն բանաւոր խաշանց իւրոց .
այսպիսի սիրալիր գթով գոչէր առ
անէր վասն արագահաս օգնականու-
թեան , շարժելով 'ի գութ զայն որ
ոչ երբէք դադարէ 'ի գթալոյ ։ Եւ
այսպիսի թախծեալ սրտիւ հեղոյր
զանձն առաջի տեառն . և յորդա-
ռատ արտասուօք ոռոգէր զերեսս
երկրի . որ և այսպիսի աղօթիւք սա-
տակէր զանօրէննն Յուլիանոս զան-
մտութեամբ յարուցեալն 'ի վե-
րայ եկեղեցւոյ սրբոյ ։ Եւ ինքն որ
ըստ օրինակի տեառն զամէնեցուն
կամէր կեալն և 'ի գիտութիւն ճըշ-
մարտութեան գալ , փութանակի
հասանէր առ թագաւորն . թերևս
կարասցէ շահել զփրկութիւն ո-
գւոյ նորա ։ Եւ անդ 'ի ձեռն ա-
ռեալ զերրատ վարդապետութեան
իւրոյ , բազում ջանիւ հնարէր գար-
ձուցանել զնա յապարասան բա-
րուցն զոր ստացեալն էր . յուշ-
առնելով նմա զտեառն մարգարէ-

րութիւն և զերախտիս Նախնեացն և զջանս վաստակոց նոցին. Ով Թագաւոր, ասելով, ընդ է՞ր անմտանաս 'ի քրեական մեղս յանդգնելով. եկեղեցի գնեալ է պատուական արեամբն Քրիստոսի, և քարինք սորա շաղախեալ են 'ի կայլակահոս աղբերէ կողից նորա. և շինուած յարկի սորա առաքելովք և մարգարէիւք հիմնացեալ է. հայրապետաց և վկայից կատարմամբ աւարտեալ է. հրեշտակաց բնակարան և մարդկան քաւարան խոստովանեալ է. աթոռ աստուածութեանն 'ի սա կառուցեալ է. զնորածնեալսն՝ որդիս Աստուծոյ առնէ. զամուսնացեալսն՝ ողջախոհութեամբ զարդարէ. զննջեցեալսն հաղորդս առնէ տեառն արքայութեան: Զի՞մ առնես զսա տեղի և բնակարան դիւաց. զխա՞րդ զտաճար Աստուծոյ՝ բագինս կռոց. ո՞րպէս զյարկս փրկութեան՝ տեղի կորստեան. ընդ է՞ր ըզտուն սրբութեան՝ վայրս պղծութեան. զի՞նչ օգտեցան այնոքիկ որք այդպէս անմտացան. ո՞ւր են Թագա-

ւորքն տաճարինք չարագործութիւնքն և ա-պարտաւանք , որք պաշտօնեայք էին դիւաց . ո՞չ ապաքէն որպէս զծուխ պակասեցան , և խորխս զփոշի զոր տարաւ մրրիկ . և երանի՛ թէ այս-չափ միայն . այլ կան և մնան լուց-կեք յաւիտենական տանջանացն ։ Եւ զքեզ կամիմ զի ընդ երկրաւոր թա-գաւորութեանդ՝ և զերկնիցն ժա-ռանգեսցես զարքայութիւն . և ընդ անցաւոր փառացս՝ զանանցն առ-ցես փառս ։ Յիշեա զմեծն հաւա-տոյ զՏրդատիոս և զԳրիգորիոս , զհաւըն իմ և զհաւն քո . ուստի երր-կին կոփեցայք ընդ մարմնոյ և ընդ հոգւոյ . Նոքա զդիւաձոյլ պատ-կերան խորտակէին , և զմեհեանան քանդէին , և 'ի տեղին եկեղեցիս հիմնարկէին ։ Եւ դու զտաճար Աս-տուծոյ բնակարան դիւաց տանես և տեղի կռոց պատրաստես ։ Եւ ո-րպէս տանջանաց չիցես արժանի . կամ ո՞ր գեհեն զքեզ ոչ այրեսցէ . վասն զի հրկէն է ապարասանու-թիւնք . ուրացութեանք և 'ի սըր-բութիւնն մեղանչես . զի թէ 'ի

վայրաբնակ անդիս կռապաշտելն կորուստ է անձին, ապա զո՞ր ներումն թողութեան ունիցի որ առ սեղանովն Աստուծոյ զպատկերս դիւաց դնիցէ. քանզի զի՞նչ հաղորդութիւն է լուսոյ ընդ խաւարի. կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ ընդ մեհենեաց։ Վասն որոյ նպաստաւորութիւն մատուցանեմ քեզ զգուշանալ 'ի չար յամառութենէդ. զի մի եկեսցէ 'ի վերայ քո բարկութիւն տեառն. զի թէ Բաղտասար արքայ բաբելացւոց՝ որ զսպասս սրբութեան յանարժան տեղիս մատուցանէր՝ չարաչար սատակեցաւ, ապա առաւել եւս քեզ լիցի կորնչել, որ զգարշելիսն 'ի սրբութիւնսն մերձեցուցանես. վասն որոյ աղերսիւ հայցեմ և փոխան աղաչեմ ով թագաւոր, մի փութար 'ի քոյին կորուստ։ Մի զերկրաւոր թագաւորի պատկերդ յարգոյ համարեսցիս քան զպատկերդ երկնաւորին. յիշեա զի գրեալ է, ի պատկեր իւր արար Աստուած զմարդն։ Մի փոխանակեր զմահկանացուդ

ընդ անմահին, զուարճացիր ընդ մշտնջենաւորին. զի այդմ պատկերի նախադաղափարն վաղվաղակի չարաչար ըստ արժանւոյն կորնչելոց է. իսկ ոգւոյդ քո կայ և մնայ յաւիտենական պատրաստեալ զաթոռ իւր 'ի դատաստան, առ 'ի մշտնջենաւոր դատել զայնպիսին ։ վասն որոյ, ով Թագաւոր, զարթիր 'ի թմբրութենէդ որ ոչ է 'ի քնոյ. սթափեաց յարբեցութենէդ որ ոչ է 'ի գինւոյ, այլ վայրի արժանիս. հիւանդ ես հոգւով, մի զանմահ մահն մեռանիր. կիսադոս ես առ այժմ, մի քնաւ ապականիր. ել 'ի զղջումն փութապէս. ամբարձ յերկինս զաչս քո, նայեաց 'ի բարձունս առ տէր Աստուած քո ։ Յիշեա զարարիչն որ ստեղծ զքեզ յոչնչէ, որ եհան զքեզ յարգանդէ. որ կերակրեաց զքեզ 'ի մանկութենէ. որ փչեաց 'ի քեզ զշունչ. որ ետ քեզ զարքայութիւնդ. որ խոստացաւ քեզ զհանդերձեալն եթէ պահեսցես զպատուիրանս. որ իշխանութիւն ունի կենաց և մահու քո.

յիշեա զշնորհս աւազանին որով լուսաւորեցար · յիշեա զսնունդ սրբոյ եկեղեցւոյ որով դաստիարակեցար · յիշեա զհաղորդութիւն մարմնոյ և արեան տեառն որով քաւեցար · յիշեա զնշանն տէրունական որով կնքեցար յաւուրն փրկութեան · որով և պահպանեալ եղեր · որով և փրկութիւն գտեր · յիշեա զմիւսանգամ գալուստն յորժամ ծագի նշան փրկչին 'ի յարեւելից պայծառ քան զարեգակն · յիշեա և զդնիլ աթոռոցն , զահեղ դատաստանն , զիւրաքանչիւր գործոց հատուցումն , յորժամ Հայր և Որդի և Հոգին սուրբ բազմին յաթոռ փառաց · և զօրք հրեշտակաց յերկնից յերկիր հեղուն · մինչ զի թափուր լինել երկնից 'ի բնակչաց ։ Որպիսի՜ լինիցի ատեանն այն · յորժամ բանքն սպառին և գործքն թագաւորեն · յորժամ իւրաքանչիւր ումեք յանցանք հրապարակայայտ լինին , և զարհուրեալ դողան տարրեղէն արարածքս ։ Անդզայս ամենայն քեզ յուշ արարից ,

յորժամ զղջասցիս և ոչ օգտեսցիս. հառաչեսցես և ոչ հասանես. խըն-դրես և ոչ գտանես. զի կոչէի և ոչ լուար. յերկարէի զբանս և ոչ ան-սացեր. վասն որոյ այժմ լուր. մինչդեռ ժամանակս ՚ի ձեռս է. մինչդեռ դոյ յոյս փրկութեան և ժամանակ ապաշխարութեան։

Ընկեր առաջի տեառն արտա-սուօք և աղաչեա զերեսս նորա ա-պաշխարութեամբ. ասա, Մեղայ տեառն, որպէս Դաւիթ. և լուիցես պատասխանի, եթէ՝ Եթող տէր զյանցանս քո. արտասուեա ընդ Պետրոսի և ընկալցիս վերստին ըզ-շնորհս. ընդ Պաւղոսի յուշ արա զանդգիտութիւնդ. ընդ մաքսաւորին քաւութիւն խնդրեա. ընդ աւա-զակին գոչեա մեծաձայն, Յիշեա զիս տէր յարքայութեան քում. և լուիցես ժառանգել զդրախտն աս-տուածատունկ։ Լեր օրինակ բազմաց մեղուցելոց և վստահութիւն յու-սահատելոց. որք ՚ի քոյդ նայելով ՚ի դարձ, դարձցեն ՚ի զղջումն ապաշ-խարութեան և յուսասցին Թողու-

թիւն գտանել. գոչեա ընդ Մանասէի, Չեմ արժանի հայիլ 'ի բարձրութիւնս երկնից 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. վասն զի կանգնեցի պատկեր և բազմացուցի ըզչաստուածս անձին իմոյ. և զայլս որ 'ի կարգին. որով հանդիպեսցիս փրկութեան. ահա ծանուցի քեզ զամենայն ճշմարտապէս որով ապրեսցիս:

Եւ յորժամ ամենայն բանքս այսոքիկ ոչ ազդէին 'ի միտս Թագաւորին, այլ կարծրացուցանէր ըզմիտս իւր իբրեւ զսալս դարբնաց. և խնոյր զականջսն որպէս իժի և քարբի չարաթոյն գազանացն. և ոչ տայր տեղի Թովչին Ճարտարի, առնուլ դեղ 'ի դեղատուէն իմաստնոյ. յայնժամ զմարգարէականն 'ի կիր արկանէր զհրաման մեծին Դաւթի երանելի սուրբ հայրապետն Ցուսիկ. զորոյ զանուանն ասել քաղցր է 'ի լսելիսն իմ զօրէն պատուիրանի տեառն առաւել քան ըզքաղցրութիւն մեղու 'ի քիմս ճաշակողաց ըստ հոգերգողին. և զինչ գոր֊

ծէր երջանիկն 'ի հովուապետս . զատոտ բարկութեանն 'ի ձեռին առեալ իբրեւ զնեցուկս . երկաթեղէնս . և զպատկեր պոռնկին իւրեւ զանօթս կաւագործաց խորտակէր , և տոփելով 'ի վերայ ոտամբ՝ բարբառէր . Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն 'ի ներքոյ երկնից . զի կուռք հեթանոսաց դևք են . և զի ետ տէր հրաման 'ի վերայ իժի և քարբի գնալ և կոխել զամենայն զօրութիւնս թշնամւոյն : Եւ այսպէս առաթուր հարեալ զդունեալ գարշութիւնն , ընդ ոտիւք արկանէր զխմանալին Դողիադ . զժողովուրդ իւր ամբողջ պահելով յաներեւոյթ այլազգեաց : Եւ վանեալ մեծաւ յաղթութեամբ զվիթխարի մեծադն ահագին . զոր օրինակ մեծն Դանիէլ զդարշելին զայն 'ի Բաբելոնի . կամ իբրեւ զԴագոնն զայն 'ի ձեռն սըրբութեան տապանակին առ քանանացիսն : Ընդ որ ցասուցեալ թագաւորին , զամենայն թոյնս դառնութեան իւրոյ թափէր 'ի նա փու-

թանակի · անօթ եղեալ սատանայի , զկամս նորա կատարելով յօժարութեամբ ։ Եւ հրամայեր ձաղկել զնա ուժգին · ոչ միայն ըստ Պաւղոսի քառասուն միով պակաս , այլ մինչեւ յոգնս , զի զրաւեսցի 'ի կենաց · որպէս և եղեւն իսկ ։ Տոփանաւ հարեալ հանգոյն եղբօր տեառն Յակովբայ · որոյ և փառացն հազորդ գտեալ 'ի Քրիստոս · ո՛վ անմտութեան զինուորացն · ո՛վ չարին սպասաւորացն · ո՛վ արբանեկաց բանսարկուին ։ Յորժամ բարկանայր Սաւուղ 'ի վերայ քահանայիցն և հրամայեր կոտորել զնոսա վասն կերակրելոյն զԴաւիթ , ոչ առին յանձն սպասաւորքն · այլ հրաժարէին ամենեքեան ասելով, Ոչ մխեսցուք զձեռս մեր յօծեալ տեառն · մինչեւ Դովեկ ասորի պատահեր նոցա հրամանաւ Սաւուղայ · և յորժամ յանդիմաներ Պաւղոս զքահանայապետն Անանիա վասն հրամայելոյն հարկանել ըզբերան նորա , և սպասաւորացն ասացեալ՝ զքահանայապետ Աստու-

ծոյ հայհոյես, ասէր․ Ոչ գիտէի եղբարք եթէ իցէ քահանայապետ․ Թէպէտ և գիտէր իսկ․ յայտ առնելով․ թէ պատկառել պարտ է յօծութեան շնորհէն․ նա և տէրն մեր և Աստուած՝ յորժամ ածեալ լինէր յատեան անաստուածիցն և հարցեալ յանօրէն քահանայիցն և համարձակութեամբ տանէր զպատասխանին, ապտակեալ լինէր 'ի չարին սպասաւորէն և 'ի չար հաւատացանողէն ընդ բարւոյ կեցուցչին իւրոյ․ որ և ասէրն իսկ․ Ա՞յդպէս տաս պատասխանի քահանայապետին․ և այսպէս ամենայն ուրեք պատկառէին 'ի պատուոյն։ իսկ սոքա միայն երեւէին լիրբք և յանդուգն, ոչ ունելով զերկեւղն Աստուծոյ և ոչ պատկառելով 'ի շնորհէ քահանայութեանն․ այլ զջանկութիւնն սատանայի կատարէին անմտութեամբ 'ի կորուստ անձանց․ զի նա մարգարեական է 'ի սկզբանէ ընդ հրամանի փրկչին մերոյ։ Աւա՜ղ անմտութեան ազգիս մերոյ․ քանի՛ լուսաւորիչս խաւարեցուցին․

որչափ աստուածաբան բերանս խը-ցին. քանի՛ սիւնս եկեղեցւոյ տապալեցին. զԱրիստակէս սրախողխող արարին, զՎրթանէս հեռահալած առնելով. զՅուսիկն ողորածեծ վճարելով 'ի կենաց. զՄեծն Ներսէս դեղակուր կորուսին. զսուրբն Սահակ 'ի մեռաղս առաքեցին. որք էրբեւ ճրագունք վառեցան Հայոց ազգիս. և մեք առ ժամանակ մի կամեցաք ցնծալ 'ի լոյս նոցա: Եւ սոքա այսպիսի օրինակաւ վճարեցին զայս կեանս:

Իսկ մանուկն Գրիգորիս, եղբայր Յուսկանն երէց քան զնոյն, գեղազէշ դիմօք և բարձր հասակաւ, հնգետասանամեայ կոչեցեալ յեպիսկոպոսութեն Աղուանից աշխարհին. ծերունական հանճարով և սրբասէր վարուք՝ զՄեծին Գրիգորի բերելով յինքեան զնմանութիւն, հետեւոտս ընթացեալ զերկայնաձիգ ճանապարհն ըստ օրինակի փրկչին մերոյ Յիսուսի, ճշմարտապէս անօթ ընտրութեան գտեալ փառացն Աստուծոյ ըստ երանելւոյն

Պաւղոսի. կրեալ զանուն առաջին տեառն խուժադուժ ազգաց և ժողովրդոց՝ քարոզութեամբ բանին կենաց: Արիաբար 'ի մարտ մտեալ ընդդէմ բանութեան բանսարկուին. բոլորապատուղ զինուքն մատուցանելով պատարագ ընդունելի 'ի հոտ անուշից տեառն՝ այսպէս և ըստ այնմ օրինակի. զի յորժամ եհաս յաշխարհն յայն և յանդիման եղեւ Թագաւորին նոցա, զճշմարիտ վարդապետութիւնն 'ի կիր արկանէր. և ջերմեռանդն սիրով քարոզէր նոցա զաւետարանն Քրիստոսի: Եւ զի նոքա յառաջ էին հաւատացեալ քարոզութեամբ առաքելոցն և դարձեալ վերստին 'ի նոյն մոլորութիւն էին խոտորեալ, վասն որոյ զյեղյեղուկ և զդիւրափոփոխ բարս որպէս գործ էին ստացեալ. և յեղուզակ արշաւանաց էին պարապեալ. վասն որոյ Թէպէտ զառաջինն ընդունէին զբան վարդապետութեան երանելւոյ հայրապետին, բայց յորժամ տեսին Թէ հաստանել կամի զյոյս աշխարհի նոցա, առաւելա-

պէս 'ի նախանձ դրդէին ։ Եւ զի քարոզէր նոցա մանուկն Գրիգորիս ասելով, Ով մարդիկ, դարձարուք առ տէր Աստուած ձեր և ծանե֊րուք զարարիչն ձեր և զհաստիչ, և մի յընդունայնութիւն ծախէք ըզ֊շնորհս բանականութեան ձերոյ և զհանճար իմաստութեան, հաւա֊սարելով անասնոց անմտից, որք ոչ ճանաչեն զարարիչն իւրեանց. այլ գիտասջիք զի ձեր տէր գոյ յեր֊կինս. որ կարողն է կերակրել զա֊մենեսեան բանիւ զօրութեն իւրոյ. որ կեցուցանէ միշտ զկորուսեալսն ըստ հաճոյից կամաց իւրոց. և ըզ֊հրամանէ նորա կախեալ կան ամե֊նայն եղական բնութիւնք. որ ասէ արեգական և ոչ ծագէ. և զանձրեւ 'ի հուր փոխարկէ. որ թուէ զբազ֊մութիւն աստեղաց, և զամենե֊սեան զնոսա յանուանէ կոչէ։ Եւ 'ի բուռն ունի զշունչ ամենայն կեն֊դանեաց. որ բանայ և ոչ ոք է որ փակէ. և փակէ, և ոչ ոք է որ բանայ. որ առնէ զհրաշակերտս և զմեծամեծս որոց ոչ գոյ թիւ. որ

փակեաց զծով տաւղով. և զթանձրութիւն հոծ և կարծրագոյն խըճողեալ երկրի՝ 'ի վերայ հաստատուն և լոյծ բնութեան ջուրց հաստատեաց. և որպէս կամի փոփոխէ զամենայն անհնարինս 'ի հնարաւորութիւն։ Եւ արդ որդեակք, լուարուք և 'ի միտ առէք զհրաման պատուիրանի տեառն. որպէս զի բարի լինիցի ձեզ, և ողորմութիւն գտջիք 'ի մարգարէութենէն 'ի դէպ ժամանակի։

Զայս և առաւել քան զայն քարոզէր և ուսուցանէր երջանիկ հովլուսաւորեան Գրիգորիս 'ի մէջ բազմամբոխ ժողովրդեանն այնորիկ, յորդորելով զնոսա 'ի հաւատս, և վարժելով 'ի գիտութիւն ճշմարտութեան. որք թէպէտ և զառաջինն տեղի տուեալ ունկնդիր լինէին քարոզութեան սրբոյ տեառն Աստուծոյ, բայց յետոյ հրապոյրս պղտորս և գանձացուցիչս արբեալ սատանկապէս զարժանին վայրի մատուցողաց և ընդունողաց, և կարծրացուցեալ զմիտս իւրեանց որպէս

զփարաւոնին և զնմանեաց նորին, և զչարեալ չարացն այնոցիկ 'ի չարագոյն հօրէն չարութեան, չարապէս չարչարանօք զչարչարանս սրբոյն հնարէին. կատարելով զկամս չարաթոյն վիշապին, արբանեկին իւրեանց չարութեանն, որ հրապուրէր զնոսա յայնպիսի չարութիւն, Եւ զի՞նչ ոռնէին. Նորահնար իմն չարի գտակ եղեալ. զի հանդիսաւոր և հաչակելի չարութիւն գործեացեն: Եւ գտեալ 'ի դէպ չարին խորհրդոց, որով յագեցուսցեն զախտ սրտմտութեանն, զվայրենի ամեհութիւն քառաքեաց երիվարաց. որով ստորաքարշ ընթադրութեամբ զկեանս սրբոյն սպառէին, յածեցուցանելով ընդ լայնանիստ մեծութիւն դաշտին. զի իմնամով մանրամասնաբար երկարութեամբ գզեսցի մատաղ մարմին սուրբ հովուապետին. յորոյ կարմրագոյն արեանն հեղմանէ՝ անբուսածին քարինք ծաղկէին, և թանձրագոյն հողն ոռոգանէր, կանաչագեղ բոյսքն ծիրանեգոյն ներկանէին, և խռուա-

ցեալն գաւառանայր ։ Իսկ մեծ քա-
հանայապետն և երջանիկն յամե-
նայնի՝ արդարեւ նմանեալ առեան
իւրոյ մեծի հովուապետին , առ-
թելով վասն հօտին իւրոյ փրկու-
թեան , ոչ միայն ոչ համարեալ ՚ի
մեղս զյանդգնութիւնն աղերսէր .
այլ և ողորմութիւն գտանել ՚ի
ստեանն հայցէր ։ Իսկ այնչափ ջեր-
մեռանդն սիրով զգուշ գործոյ
հաստատուն ունէր , մինչ զի ՚ի սառ-
րաքանչ ընթացրութեանն ոչ լինէր
կասեցեալ յայսպիսի խնդրոյս . այլ
մինչեւ յեղանել շնչոյն զնոյնս առ-
թէր . որոյ ոչ լինէր անպտուղ մաղ-
թանք աղօթից սուրբ հովուապե-
տին . այլ ՚ի յանկ ելեալ սիրապետ
կատարիւր խնդիր հայցուածոց նո-
րին . զի մինհուամբն իւրով և կա-
մաւոր չարչարանօքն շահէր զփրը-
կութիւն նոցա . և հաստատէին ՚ի
հաւատս ճշմարիտս ։ Իսկ յառնէր
յազգէ նոցա թագաւոր բարեպաշ-
տօն և երկիւղած յԱստուծոյ . և ՚ի
խնդիր ելեալ մեծաւ յուսով նշխա-
րաց սրբոյ քահանայապետին , գտա-

ներ'ի գեւղն Ամարաս · մեծաքանչ հանդիսիւ տօնախմբելով զյիշատակ նորա ցնծութեամբ ամ յամէ 'ի փառս Աստուծոյ:

Եւ արդ սոքա չորեքին շառաւեղք մեծի հօրն հաւատոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, սերեալք սերտութեամբ 'ի նմանէն տիրապէս ոչ միայն ըստ մարմնոյ, այլ և հոգեւոր շնորհացն գոլով պըտուղք գովելի երկամբք · սիրողք սրբութեան և քարոզք ճշմարիտ որդւոյն Աստուծոյ · յիւրաքանչիւր ժամանակս պայծառացեալք պանծալի փառօք · առաքեալք առաքողին, և սիրեցեալք 'ի ճշմարիտ սիրոյն · քահանայք պատուեալք քաղցրուսոյց վարդապետութեամբ · արեգակունք կողմանցս արեւու, և լուսատուք 'ի խաւարի նստելոցս · ցնծութիւնք տրտմեցելոց, և ժողովողք ցրուեալ հօտից · նարդոսք անուշաբուրիչք, և քրքումք քաղցրատեսիլք · տիեզերաց ծաղիկք, և աշխարհի խնդութիւն · պարծանք քրիստոնէութեան, և պսակք

եկեղեցւոյ . Միջնորդք խաղաղու-
թեան , և հաշտեցուցիչք արարչին
ընդ արարածս . ծնեալք շնորհօք
Հոգւոյն սրբոյ , և փոխանորդք Ճշ-
մարիտ ծնելոյն . լուսաբաշխ աջով
օծանելով զամենեսեան յիւրաքան-
չիւր աստիճանս , քանոնք հաւատոյ
և բարձրացուցիչք եկեղեցւոյ . վար-
դապետք տղայացելոց , և դաստիա-
րակք զարգացելոց . ոմանց կաթն
ջամբելով 'ի Քրիստոս , և ոմանց
հաստատուն կերակուր ըստ Պաւ-
ղոսի . պարիսպք շրջապատ եկե-
ղեցւոյն Քրիստոսի , և աշտարակք
ամրութեան հաւատոյ . 'ի յերկրի
խորանակիցք մարդկան , և 'ի յեր-
կինս դասակիցք հրեշտակաց . Նա-
ւաւարք ճշմարտութեան , և նաւա-
հանգիստ ալեկոծելոց : Ամուրք հա-
ւատոյ և պարծանք հաւատացելոց .
և արդ զի՞նչ ես ասացից . զի անկա-
րանայ բանս առ 'ի ներբողել զսո-
սա . ամենայնք յամենայնի , և ընդ
ամենայնի ամենայնք եղեալք զամե-
նեսեան ընլով . տունկք անենջալեք
տանս Թորգոմեան , և բարունակք

ծաղկեալք յայգւոջ սրբութեան , այսինքն է յեկեղեցի Քրիստոսի . բողբոջեցեալք բարի արգասիւք 'ի զանազան ծաղկանց հաւաքումն . յօրինեալ պսակք վայելուչ՝ մեծապատիւ փառացն Յիսուսի :

Արիստակէս և Վրթանէս , Յուսիկ և Գրիգորիս , քառակի Թուով պանծացեալք հանգոյն չորից տարերց 'ի լնութիւն լրման աշխարհի . լիացուցիչք լուսով լիապէս . յեգեմաբուղխ աղբերէն յառաջեալք ըստ քառառաջ վտակացն յարձակման , առ 'ի զովացումն ծարաւելոց քառանկիւնի աշխարհի լրման . սիւնք ամրութեան յԱստուած խարսխեալք , միշտ յօգտութիւն հաւատացելոց . չորեքդիմեան կառք իմանալիք ըստ հրաշալի տեսլեանն Եզեկիելի . աթոռք փառաց որդւոյն Աստուծոյ . բարձողք լծոյ բարձրելոյն շնորհի , յորս հանգչի Աստուածն ամենի . փառաւորեալն ընդ Հօր և Հոգւոյն : Ընդ սոսա և մեծն Դանիէլ դասակցեալ՝ երանելին և երջանիկն 'ի հարս . որպէս

տալ՝ աշակերտս եղեալ յառաջա-գոյն Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, և յերկարեալ մինչև 'ի խորին ծերութիւն. առոյգ զօրով ազգաւ, 'ի զատական ցեղս որոշե-լով. բայց համեմատ զօրով սրբոցս, 'ի սրբութեան վարս հաւասարեալ. որ և յանապատի բնակելով հան-գոյն մեծին Յովհաննու և Եղիայի, և այնչափ առաքինասէր վարուք հա-ճոյացեալ Աստուծոյ՝ և մեծագոյն շնորհի արժանացեալ յարարչէն, մինչ զի մեծասքանչ հրաշք և զար-մանալիք կատարէին 'ի ձեռս նորա 'ի շնորհացն Աստուծոյ. որ զի թէ հարկ հասանէր 'ի ձմերայնի ընդ լեռնային վայրս ճանապարհոր-դել, կամ վերանայր թանձրու-թիւն ձեանն 'ի ճանապարհէն, և կամ յափշտակեալ լինէր մարմնով 'ի տեղին յոր և կամէր գնալ սուրբ ծերունին:

Եւ արդ 'ի ժամանակին յայն-միկ յորում սուրբն Յուսիկ նահա-տակեալ լինէր ձաղկմամբ 'ի Տիրա-նայ թագաւորէն Հայոց ազորածեծ

առնելով զնա , և 'ի կենդանեացն՝ փոխէր յաշխարհն կենդանի՝ արիական վկայն Քրիստոսի . և սուրբն Դանիէլ յայսմ ժամանակի կենդանի գոլով յանապատի , և վասն հաշակելի առաքինութեանն՝ ածեալ լինէր 'ի Թագաւորն , զի կացուսցեն զնա յաթոռ հայրապետութեանն Հայոց՝ փոխանակ սըրբոյ Յուսկանն : Եւ խստագոյնս յանդիմանեալ զԹագաւորն և զպատաւորսն ծերունին սուրբ , 'ի յուշ ածելով նոցա զապարասանութեան գործս իւրեանց . վասն որոյ յաւելեալ 'ի չարիս Թագաւորն զեւս անմտութիւնն , խեղդամահ առնէր զերանելին , ոչ պատկառելով 'ի հրեշտակական վարուցն և 'ի պատկառելի դիմացն . զի թէ Ընդ փայտ դալար զայն առնէին ընդ չորն զի՞նչ լինէր . այսինքն՝ եթէ ընդ սուրբն Յուսիկ որ շառաւիղ գոլով սրբոյ Լուսաւորչին մերոյ և քահանայապետ փոխանորդ յաթոռ նորա , այնպիսի հարուածք անցուցանէին , ապա 'ի սուրբն Դանիէլ , որ ոչ տղ-

դայքն դաշտով ըստ մարմնոյ և ոչ
յաղթող սրբութեան բարձրացեալ՝,
դէմքդ խնայեքն ։ Ողբացէք ծառք
անտառաց և ծաղկեք դաշտաց զան-
մտութիւն աղջկա մերոյ, եւս առա-
ւել զթագաւորաց մերոց անզգա-
մութիւն. վասն որոյ տայր զվրէժն,
անձամբ վճարեալ զպարտս չա-
րեացն յառաջնոյ ընդ մեծագոյն յա-
մառութեանն. վասն զի կուրացեալ
լինէր 'ի Պարսից արքայէն. աւհա-
ւատչեայ անտի տանջանացն զա-
տիս ընկալեալ պատուհաս. զի է՝
որոց տայ ներէ Աստուած և անդ
տանջէ զչարս, և է՝ զորս տայ և
անդ տանջէ, զի մի կարճամտիքն
թերատացքն ։

Եւ արդ հնդկեքն ազգս մտա-
բանեալք 'ի միասին տանախմբու-
թեամբս, հնդից զգայութեանց
մերոց լինին մաքրութիւն, և բա-
րեխօսք միջև սա Աստուած վասն
տանողացս պակշտանաց ազգս ։ Զի
տանատիրութիւն տանատիրաց՝ ա-
ւանց չարչարանաց և նահատակու-
թեան պսակակից առնէ սրբոց

զտօնողս եւրեանց սիրով յուսով և
հաւատով ։ Եւ արդ, դուք ինձ, ով
աստուածային գլուխք՝ ոչ մի կամ
երկու, այլ հնգեքին 'ի միասին
պատուեալք․ զսակաւ հիւսուածս
բանից յաղքատիմաց մտացս և յան֊
արժան անձնէ՝ սիրով ընկալարուք․
Թէպէտ և ոչ ըստ ամենարժեայ
մեծութեան ձերոյ, այլ 'ի մենջ
ըստ կարողութեան հատուցեալ․
և հատուսջիք մեզ յանսպառ աղ֊
բերացդ ըստ մեծութեան շնորհի
ձերոյ զառատ ողորմութիւն․ զի
այժմ առաւել ունիք համարձա֊
կութիւն բարեխօսել առ որում
մերձ էք Աստուծոյ, քան յորժամ
'ի մարմնի տաղաւարէիք ։ Այլ և
խնդրեսջիք յամենողորմ տեառնէն
աշխարհի զխաղաղութիւն, և եկե֊
ղեցւոյ սրբոյ զհաստատութիւն, և
մանկանց նորին զմաքրութի̄ն և զսի֊
րոյ կապակցութիւն, վերակացուաց
բանաւոր հօտից զմիաբանութիւն և
զուղիղ քարոզութիւն․ ժողովրդոց
զհաւանութիւն և զանդորրութիւն․
և մեզ խորախայցեալք 'ի հոգեւոր սե֊

զանոյ ձերոյ, փառաւորեսցուք ընդ Հայր և զՈրդի և զՀոգին սուրբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՑ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆՑ

ԵՐՋԱՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ

ԱՐԻՍՏԱԿԻՍԻ, ՎՐԹԱՆԻՍԻ

ՅՈՒՍԿԱՆՆ,

ԳՐԻԳՈՐԻՍԻ, ՈՐԴԻՈՑ ԵՒ ԹՈՌԱՆՑ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ



ԱՄԵՆԱԳՈՒԹԴ Աստուած որ ա-
սաց 'ի խաւարի լոյս ծագել, որ և
ծագեաց ճշմարտապէս իսկ 'ի սիր-
տըս մեր 'ի ձեռն երանեալ նահա-
տակին սրբոյն Գրիգորի, որք նըս-
տէաք 'ի խաւարի և 'ի ստուերս
մահու, և ծագեաց այսպէս: Արդ-
յեւթն և 'ի տասներորդ ամի ար-
քայութեանն Տրդատայ՝ նստու-
յաթոռ սրբոց առաքելոցն Բար-
թողոմէոսի և Թադէոսի, սրբու-
թեանցն գտեալ քահանայագոր-
ծող, և ծնող մեր ըստ աւետարանին
և նախահայր աստանօր արտադրե-
լով: Յետ այսորիկ ապա գնացեալ
եւս ընդ արքային Տրդատայ յաս-
տուածակարգ կայսրն Կոստանդիա-
նոս բազմօք իմն և նազելի և
վայելուչ մեծարանօք պատուէ ըզ-
սուրբ հայրապետն իբրև զկենդա-

նի մարտիրոս առաջի անկանելով. և աղօթս նուիրականս և օրհնութիւնս 'ի նմանէն հայցելով. և այսպէս զնա պատուաւորեալ. և Տէրդատաւ հանդերձ հանեալ յոսկիապատ կառս, մեծաւ շքեղութեամբ յուղարկէ զճանապարհայն [?] :

Զայսու ժամանակաւ յայտնեալ լինէր Արիոս Աղեքսանդրացի, որ դաւաճանեալ 'ի դիւէ անտի, ոչ գոլ ասէր զՈրդի 'ի բնութենէ Հօր, և ոչ հաւասար նմա և ոչ յառաջ քան զյաւիտեանս 'ի Հօրէ ծնեալ, այլ արարած, և յետ ժամանակի գոյացեալ : Վասն այսորիկ իսկապէս ժողով եպիսկոպոսաց լինի 'ի հրամանէ Կոստանդիանու 'ի Նիկիա Բիւթանացւոց, ընդ որս և մերն Առիստակէս կոչեցաւ. և անդ հօլք [?] երեքհարեւր ութեւտասն ըստ հոգւոյն սրբոյ տուչութեան [?] քսկեալ [?] զաղանդն Արիոսի՝ նզովեալ մերժեն զնա 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ : Իսկ նորա զարժանի ամբարշտութեանն կրեալ հատուցումն, և խառն ընդ գարշելիսն 'ի վայր ընդ փորոտիսն վայթեալ [?] սատակէր :

Իսկ առաջս մերն Արիստակէս դար֊ձեալ գայր , ընկերեալ ընդ հօր զար֊ժանեցելոյ քաղաքն կանոնեալ զգու֊խոյս ժողովոյն . ընդ որ յաւելու խորհուրդ լեալ Գրիգորի . յաւելլոյր այլ եւս զլուխս 'ի Նոյն՝ 'ի զգուշու֊թեան մեծամեծաց խորոց : Բայց յոր֊ժամ հեռաց եկն Արիստակէս 'ի ժողո֊վոյն Նիկիայ , այլ ոչ եւս յաւել երեւել սուրբն Գրիգորիոս մինչեւ ցվախճան իւր . այլ երթայր բնա֊կէր լեռնեայն 'ի Մանեայ այրսն , ընդ զերեցեալ թէ ի Նուաստահան֊գիստ փոխումն նու խառնեալ , և անձն ժամակալ՝ խնդրէ զանազանս :

Իսկ առաջս լուսաւորութեանս մերոյ նահատակեալ որդոյն Գրիգորի և ա֊ռաքելական աթոռոյն Նախաշաւիղ Հանդուրդարքէ , յեկեղեցւոյ անտի կարող յաթոռ հայրապետութեանն մինչեւ ցայսմայր , յորում ոչ եւս յաւել ամիս երեւել , թուրն այնց երկուան :

Իսկ սուրբն Արիստակէս ժառանգ֊հայրենի աթոռոյն , ամենայն իրաց շնորհ երեւոյր սուրբ և արդար վար֊

տակոց, ջանացեալ քրիստոսադիր
կնքաւ նուաճել զհօտ իւր 'ի կամս
Քրիստոսի, զոմանս հաւանողակա-
նաւ, իսկ զոմանս բռնաւորականով
կարգով ջանայր պահել յականատա-
նի, և իբրեւ զսուր ինչ յազգեր միշտ
ունելով զհոգւոյն շարժմունս,
յանդիմաներ զորս գտանէր 'ի
չար գործս հակառակ Հոգւոյն.
ընդ որոց ապա և Արքեղայոս ոմն
կուսակալ Ծոփաց աշխարհին, կըշ-
տամբեալ 'ի նմանէն սակս չար գոր-
ծոց իւրոց, ըստ դիպաց իմն 'ի Ճա-
նապարհի ուրեմն յաշխարհին Ծո-
փաց ժպրհեալ, ոխերիմ մտօք
սպանանէ զսուրբն սրով փախըս-
տեայ ինքն գնացեալ յարեւմուտս
Տաւրոսի. զոր ապա բարձեալ ըզ-
նշխարեալ մարմինն նորուն աշա-
կերտացն տարեալ հանգուցին յԵ-
կեղեաց գաւառն, 'ի Թիլն աւանի,
կացեալ յաթոռ հայրապետու-
թեանն ամս եւթն: Ոչ թաղումն
թերեւս զնորայն վարկեալ իմ, այլ
փոխումն յայսմ աշխարհէ յաշ-
խարհն կենդանեաց, ուր ոչ լոյ

համբաւ մահու , այլ մշտնջենա-
զուարճ ուրախութեան ։

Իսկ զկնի սորա անդրանիկ եղ-
բայր սորուն Արթանէս յաջորդէ
զաթոռ սորուն , որպէս և հաճոյ
թուեցաւ Հոգւոյն սրբոյ ։ Բայց
հոգեւոր ծառագայթն մեր սուրբն
Գրիգորիսս ամս բազումս կացեալ
յայլս Մանեայ փախճանի , անդէ-
տաբար իմն թաղեալ 'ի հովուաց՝
իբրեւ զանեալ զնա 'ի կարգ իմն ազ-
քատաց ։ Իսկ զկնի բազում ամաց
գտանէ զսուրբ մարմինն նորա Գառ-
նուկ ոմն ճգնաւոր աստուածայինն
իմն գոգցես տուչութեամբ . և տա-
րեալ դնէ 'ի գեւղն Թորդան , յուր
իսկ զբուսանաց պարտիզկանն ։ Զկնի
ամաց ինչ ապա և սուրբն Տրդատ ար-
քայ յանհամբուրիցն բարոյ և յան-
հընազանդից ճշմարտութեան խար-
դաւանեալ խորամանկութեամբ և
տուեալ նմա արբուցումն մահու .
զոր տարեալ հանգուցանեն զմար-
մին նորա 'ի նմին աւանի 'ի նոյն
պարտիզկան , մերձ եդեալ 'ի քնա-
րանս սրբոյն Գրիգորի . որ համե-

մատ ընդ նմա իսկ զամենեսեան առ-
տորոշէր 'ի Ճանապարհայ չարաց
վերակացու երկրորդ լեալ լուսա-
ւորութեանս մերոյ ։

Իսկ մեծն Վրթանէս, մինչդեռ
էր նա 'ի Տարօն գաւառի, 'ի մատ-
րան Յովհաննու մկրտչի և Աթանա-
գինեայ վկայի, մահ սպառնացեալ
լինէր նմա 'ի ծածուկ իմն 'ի բնակ-
չաց Սիմ լերին, որք վասն ապի-
րատ և անազգալի չար գործոց միշտ
յանդիմանեալ առ 'ի նմանէն լի-
նէին ։ Իսկ նորա զգացեալ ապա, և
տեղի տուեալ չարին, գնայ փախըս-
տեայ 'ի գաւառն Եկեղեաց, անդ-
կալեալ իւր կայեան բնակութեան ։
Իսկ յետ մահուան սրբոյն Տրդա-
տայ անօրէնն Սանատրուկ երկրորդ-
ազգաւ յԱրշակունի տանէ, զոր
կացուցեալ էր նահապետ Տրդատայ
'ի Փայտակարան քաղաքի, և յետ
մահուան նորա ապստամբութեամբ
բազմաւ Թագ իւր կապեալ․ ըստ
ամբարիշտ հրամանի նորա բարբա-
րոս հիւսիսական ազգքն այնոքիկ
զաքանչելի մանուկն Գրիգորիս,

զոր եպիսկոպոսս Աղուանից կացուցեալ էին 'ի տոհմէ սրբոյն Գրիգորի՝ սպանանէին ձեռնարկութեան ընթագրութեամբ 'ի Վասնեան գաւառին, և տարեալ հանգուցանէին զոսկերս մարմին նորա 'ի գեւղն Ամարաս՝ որ 'ի փոքր Սիւնիս.

Յետ այսորիկ տայս մեծն Վարթանէս չոգաւ գնաց առ կայսրն Կոստանդիանոս որդի Կոստանդիանոսի, ընծայերութեամբ առ 'ի նմանէն հայցեալ թագաւորեցուցանել Հայաստանեայս զխոսրով փոխանակ հօր իւրոյ Տրդատայ, զի Տիրեցէ մեզ, ասէ, քրիստոսակարգ ուղղութիւնդ ձեր, և մի լիցի մեզ տիրել Պարսից անաստուածից. զոր և ողջախոհաբար ընկալեալ զոսկերս այրն, և կատարեալ և զխնդիրն, կացուցանէ թագաւոր Հայաստանեայց զխոսրով: Իսկ յետ մահուան խոսրովայ մեծն Վարթանէս առեալ ընդ իւր զՏիրան որդի խոսրովայ, չուէ գնայ առ կայսրն Կոստանդիանոս թագաւորեցուցանել զնա փոխանակ հօր իւ-

րոյ ։ Իսկ կայսրն ապա ըստ առաջին նուագին բազմապատիկ պատուով զնա մեծարեալ և առձեռն պատրաստ զհայցուածսն կատարեալ, առաքէ 'ի Հայս պայծառապէս զՏիրան Թագաւոր պսակեալ, որ եկեալ տիրէր հայրենի տէրութեանն ։ Իսկ ապա անօթն ընտրութեան և խորհրդածուն խորոցն Աստուծոյ և առաքելական աւանդիցն քարոզ մեծն Վրթանէս լցեալ զկէտ կենացս փոխի յայսմ աշխարհէ յաշխարհն կենդանեաց, կալեալ զաթոռ հայրապետութեանն ամս հընգետասան, և տարեալ հանգուցանեն զնա ընդ հարս իւր 'ի գեւղն Թորդան ։

Եւ յաջորդէ զաթոռ նորա Յուսիկ որդի նորուն, որ հետեւող Հարցն առաքինութեան գտեալ հանդիսանայր միշտ 'ի բոլոր բարեկարգութիւնս ։ Բայց յետ հրաժարմանն Կոստանդեայ, Յուլիանոս անօրէն Թագաւորեալ 'ի Հռովմ, և հպարտացեալ 'ի վերայ գիտութեն Աստուծոյ, և կռամոլ գտեալ ու-

րանայր զՔրիստոս, և յարուցանէր հալածանս եկեղեցւոյ: Ապա պա-տանդս 'ի մերն Տերանայ առեալ, կամակատար իւր զնա կացուցանէր. և ապա զպատկերն իւր նկարա-կերպս, որ ընդ դիւաց պատկերաց էր պաշտուցեալ, հրամայէ Տերանայ կանգնել յեկեղեցւոջ իւրում, և վասն զի առ վասնդի եկեղեցին՝ իւ-րովք Տերան տարեալ զպատկերն կանգնէր յեկեղեցւոջ իւրում 'ի Ծոփս գաւառի: Վասն այսորիկ դիմեալ 'ի տեղին սուրբն Յուսիկ, հոգեւոր վարդապետութեամբ որ-բոհել զնա 'ի չար մածութենէն հնարէր: Իսկ իբրեւ խնդոյր լսելոք սա 'ի չնել, յափշտակեալ ապա զպատկերն 'ի ձեռաց նորա, և ըն-կեցեալ յերկիր, և արոփեալ ո-տիւք 'ի վերայ խորտակէր. ընդ որ և 'ի չարութիւն իսկ Տերանայ բոր-բոքեալ, հրամայէ հարկանել զնա վարուցք, մինչեւ անդէն աւանդէ զոգին: Իսկ ծերունին Դանիել վասն այնպիսի չար անզգամութեան անխծակուր զարքայն արարեալ,

հրամայեաց ապա և զնա ես խեղդամահ առնել. զոր տարեալ հանդուցանեն զնա 'ի Հացեաց վանս: Իսկ զմարմին սրբոյ Յուսկանն տարեալ դնեն ընդ հարս իւր 'ի գեւղն Թորդան, որ եկաց 'ի հայրապետութեան անդ ամս վեց:

Բայց վասն զի որդիքն սրբոյն Յուսկան Պապն և Աթանագինէսն, ըստ որում խաւարեցուցինն իսկ զսիրտս իւրեանց անմտութեամբ, ըստ նմին և զսարսափելի մահ անձանց նիւթեցին. զի հրացայտ ցոլմունք 'ի վերայ հասեալ սատակէր զերկոսին 'ի միում տեղւոջ: Մանկիկ մի փոքրիկ Ներսէս անուն միայն Թողուլ իւր որդի Աթանագինէսն, որ յայնժամ էր 'ի վարժս ուսման 'ի Կեսարիա. և ապա վասն ոչ գտանելոյ այր յազգէ սրբոյն Գրիգորի, ընտրեցին զոմն Փառներսէհ անուն յԱշտիշատէ, և կացուցին զնա յաթոռ հայրապետութեանն. սա ոչ աւելի քան զերեքս ամս տեւեալ վախճանի:

Զ Ե Ն Ո Բ Գ Լ Ա Կ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԶԵՆՈՎԲԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԶՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է ՎԱՍՆ

Ա Ն Տ Ո Ն Ի

ԵՒ

Կ Ր Օ Ն Ի Դ Ե Ա Ց

ԵՒ ԱՅԼՈՑ ՃԳՆԱՒՈՐԱՑՆ



Արդ իբրեւ եղեւ ելանել սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ 'ի խոր վիրապէն, և զայնոսիկ որ դիւագնեալքն էին՝ հանդերձ թագաւորաւն բժշկեաց և դարձոյց յաստուածպաշտութիւն լուսաւորական վարդապետութեամբն իւրով, և 'ի հրամանէ Աստուծոյ ձեռնադրեցաւ 'ի սրբոյն Ղեւոնդէ մեծէ, և հիմնարկեաց զեկեղեցին զոր իմ աւե-

ըն անունս 'ի վերայ եդին՝ Գլակայ
վանք · եթող անդ պաշտօնեայս
եկեղեցւոյն զԱնտոն և զԿրօնիդէս
միայնակեացսն , զորս 'ի Կեսարիայէ
ածեալ էր ընդ իւր · և զաշակերտն
նոցա զԵպիփան հայր հաստատեաց ·
և եթող 'ի տեղւոջն կրօնաւորս քա_
ռասուն և չորս · և երկոտասան դաս_
տակերտս եկեղեցւոյն 'ի ծառայու_
թիւն կարգեաց : Եւ ինքն գրեաց
թուղթ առ Ղեւոնդ հայրապետն
Կեսարիոյ , այսպէս ·

Ջառ 'ի յաստուածուստ պա_
տուեալ և 'ի մարդկանէ փառաւո_
րեալ տեառն և աստուածարեալ
հայրապետիդ Ղեւոնդեայ Մեգա_
ղու Կեսարեայ հոյակապ քաղաքի ,
որ 'ի ձերոյ սրբոյ ձեռնադրութե_
նէդ և 'ի մեր փանաքիմացութեանցս
առաջին թուղթ ողջունիւ և սրբու_
թեամբ հասցէ · որով միշտ զխաղա_
ղութիւն պարգեւեսցէ նախ ձե_
րում փառաւորութեանդ և ապա
բոլոր տիեղերաց :

Յոյժ գոհանամք զԱստուծոյ որ հայրախնամ ողորմութեամբն իւրով զԹագաւոր յաղթող մարդկան իշխանք Ռուսիոյ երրոյ մեծին . որ զամենայն ազինս հրաւիրեաց յերկնային քաղաքն 'ի ձեռն առաջելական քարոզութեանն . յորմէ և այս աշխարհէս կարի առաւել մասն պարծանաց եհաս . զի երկրպագեան ամոլքն սուս կատարեցան բառ բաժնի Հոգւոյն սրբոյ . որ Թէպէտ և սա նոքօք վերջացան 'ի ճշմարտութենէն , սակայն ողորմութիւնն Աստուծոյ զԹագաւոր և առ մեր նուաստութիւնս , 'ի մերում ժամանակի կամեցաւ և գործեաց զսքանչելիսն , զոր դու իսկ լուար 'ի մէնջ և ծանեար : Մանաւանդ կրկին իսկ գոհութիւն Աստուծոյ մատուցանեմք , առաւել և ձեզ օրհնութիւն , զի զգանձն կենաց աննախանձ շնորհեցէք աշխարհիս Հայոց , զմիջնորդին Աստուծոյ և մարդկան զորոյ Կարապետին Յովհաննու զնշխարսն , որով ցնծաց աշխարհս Հայոց սորա

գալստեամբքս , որպէս Յորդանան Քրիստոսի գալստեամբն ։ Եւ զայն գիտութեան աղագաւ ձեզ ծանուցանեմք . զի որպէս Քրիստոսի իջմամբն 'ի Ջուրն՝ մահ կորեաւ . սոյնպէս և աստ 'ի սորա գալստեանս , զի դժոխոց դրունք բնաւ փակեցան ։ Զի է սա աստ յերկրիս Հայոց 'ի յերրորդ աւարտին լերինն՝ որ կոչի Տորոս , և հատեալ անցանէ մինչեւ 'ի դուռն Պահլաւ Պարսից . և առ նովաւ բնակին երկիրն Մամիկոնէից բազում վայելուչ տեղօք և առատատու պտղոյիւք . որ և որջացեալ էր մահ յերկուս տեղիս . ուստի և հրամանաւ Հոգւոյն ձեռն 'ի գործ արկեալ՝ կործանեցի զպատկերսն սատանայի , և եդի 'ի մատենի անխախտելի զնշխարս սրբոց վկայիցն , որ և այժմ պատուեալ երկրպագի ։ Իսկ զերկուս կենդանի վկայսն Քրիստոսի զոր դու յղեցեր ընդ իս զԱնտոն և ըզԿրօնիդէս Թողի 'ի տեղին ուր Գիսանէան կործանեցաւ . զոր տեղի Իննակնեան նոր կոչեն ։ Որոց կէտ

եղեւալ զմարս իւրեանց յաշխարհէն ,
զի խաչեալ իսկ են ընդ մարմնոյ իւ-
րեանց ընդ Քրիստոսի և արդ ջան
վասն բազմաց փրկութեան . զորս
իբրեւ զանդգիւտ մարգարիտս համա-
րիմ զնոսա առնուլ ինձ : Բայց
վասն մտերմական սիրոյդ զոր ունիս
ընդ իս , աղաչեմ զի զմիւս այլ ըն-
ծայն շնորհեսցես . զի հունձք բա-
զում հասեալ են 'ի Քրիստոս ,
բայց զքեզ իբրեւ զճշմարիտ տէր
մշակաց , զի հանցես մշակս 'ի հունձս
յայսոսիկ : Յորոց միոյն 'ի քաջ մշա-
կաց զոր ես խնդրեմ 'ի քէն` Եղիա-
զարոս Նիւսարիացւոց եպիսկոպոսն`
որ է եղբայր Զենոբեայ եպիսկոպո-
սի , զոր ընդ իս ածեալ ձեռնադրե-
ցի երկրիս Մամիկոնէից : Արդ և
զդա յղեսցես հանդերձ այլ մշակօք
մանկտուովք . մանաւանդ թէ զՏի-
մոթէոս Ադոնացւոց եպիսկոպոս
յղեսցես , զոր դու իսկ գովէիր
զհմտութիւն դպրութեանն , որ
յոյժ պիտանի է երկրիս այսմիկ . ո-
րով օգնութիւն գտեալ 'ի քէն ա-
ղօթից և խնդրուածոց , ուսոյ յա-

րաժամ ճգնութեամբ՝ բազմաց օրինակ գոլով դաստիարակելով շընորհիւն տեառն ։ Ողջ լիցիս վասն բազմաց փրկութեան 'ի տէր ն մերոյ բարեխօսութեան յապառնիսն և 'ի ներկայսս ։



ՊԱՏԱՍԽԱՆԻ ՊԱՏՄԱՆԱՒՈՐ ԳՐՈՑ ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ, ԶՈՐ ՅՂԵԱՑ ԿԵ_ ՍԱՐՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆ Ի ԺԱՄ ՎԱԽ_ ՃԱՆԻՆ

Երջանիկ և աստուածարեալ տեառն եղբօր և աթոռակցին

Եհաս առ մեզ գիր ուրախարար, և յոյժ անթերի ուրախութեամբ լցեալ կարգաւորեալ զվշտագնեալ անձն իմ. որ թէպէտ և 'ի տրտմութեան էի վասն իրիս հասելոյ, սակայն շարժեաց զմերս գանգատութիւն ձեր գոհութեան նամակդ. զոր եւս առաւել գոհութիւն մատուցանեմք Աստուծոյ ըստ գրեցելոյդ 'ի քէն. որ ոչ անտես արար զձեզ յետ յուրմէ սքանչելի ողորմութեննէն. որք բազում ժամանակս մոլորեալք ընթացան ընդ խաւար կռապաշտութեան՝ 'ի ճանապարհէ երկնային պողոտային. 'ի դէպ

ԶԵՆՈԲ. Ց

եկեալ նոցա մարգարէութեանն բան, թէ ժողովուրդ որ նստէիք 'ի խաւարի անգիտութեան՝ տեսէք զլոյս մեծ ։ Զի թէպէտ և վաղ ծագեաց արեգակնն արդարութեան, սակայն ազգ քո իբրեւ 'ի մէջ գիշերի շօշափէին զորմ կռապաշտութեան. յորս հայեցեալ Աստուած էջ 'ի փրկել 'ի ձեռաց անմարմնին Փարաւոնինէ, կրկին մովսէսեան գաղափար զքեզ տուեալ դոցա յաս՟տուածակոյս կողմանն. և դու ընտրեցար դոցա 'ի տեղի սուրբ տաքելոցն Բարդողոմէոսի և Թադէոսի. յիշեա զնոցա նահատակութիւնն և մի երբէք վերջանար 'ի շաւղաց նոցա՝, զոր ես քեզ տէր 'ի շինել և ոչ 'ի քակել. և չիք ինչ պատճառ. զի և մուտ սրբոյ Կարապետիս սկիզբն է շինութեան ։ Բայց աղաչեմ մի մոռանար և զիմ երախտիքդ զոր արարի ձեզ. զի և ես օրհնութեան գտայց արժանացեալ ։ Եւ զտեղիսն Իննակնեան՝ զոր ոմանք Բարեբուխ կոչեն՝ կացո կրօնաւորք և վանք շինեա ըստ օրինակի

այսոց կրծաւորացս զոր ատենէր 'ի մեր աշխարհէս. և 'ի որդոյն Աստուծոյ առաւել տեսցես զկարս ճգնութեան, որ ոչ ինչ պակաս է 'ի հրեշտակաց։ Եւ զԵգիպտական աշակերտաց Աստուծոյ հաւանեցուցանէ զայլ առ ձեզ. ունելով ընդ իւր արս քառասուն ճգնաւորս և խարազանագեղս, պարկեշտք 'ի վարս և հրաժարեալք յաշխարհէս. զոր առաւել կացուցանէր զԵգիպտական հայր վանացն Զենոնբայ։ Դրոշմեալքն արձան յաւիտենից, զի մի ոք 'ի քաղաքականաց կամ 'ի գեղաքաղաքացւոց զորէն Աղեքսանդրացւոցն գործեսցէ, զննելով խորաքանչելիք ունիցին խորհրդոյ շաւիղ ընտրութեան առաջնորդեան, և սահմաձեռնն ընտրել աղաչէր մի սուրբ հրաման, այլ ժողովել 'ի մի տեղ հարեւր արանց շատ. և որոշեսցեն նոցա զառաջնորդելոյս և ուսանել, որպէս զի ուղէալ վանացն 'ի նոցանէ վճարեսցին, և ինքեանք. միայն աղօթից և ճգնութեան պարապեսցին։ Խորատես և պէշխանս լինել աղքատաւորս և ողորմածս։ Իսկ զշինուածս

ՆԵՐԲՈՂԵԱՆ

ՑՈՐԴԻՍ ԵՒ Ի ԹՈՌՈՒՆՍ

ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ



Ի ՎԷՆԷՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

ՌՅԳ — 1854

ԲԱՂՁԱՆՔ սրտի իմոյ բորբոքի, և տկարութիւն անձին իմոյ նահանջեալ կասեցուցանէ 'ի յօժարութենէս. յոյսն առ Աստուած սաստիկ է, և սէր սրբոցն փութացուցանէ. բայց անարժանութիւն իմ ոչ տայ համարձակել. վարանեալ գոմ յերկոցունց, և տարակուսեալ 'ի մէջ ծփանաց. երկնչիմ 'ի մեծութենէ իրիս, և զարհուրիմ 'ի հեղգութեանցն սպառնալեաց. փութամ յուսով և սիրով 'ի դաշնակուռն բանիս, և հրաժարեմ 'ի պատկառելի պատուոյս: Մեծ է սէր քան զամենայն. և գովելի գտանի երկեւղ յորժամ ոչ լինի ընդ տանջանօք. բազում են պատճառք լռութեան, և յոլով կասկածանք արգելման. Նուաղեալ է

ժամանակ, և ցամաքեալ սէր բաղմաց:

Վասն որոյ ոչ ինչ խափանումն եպերանաց տեսանի 'ի յանդգնելոցն յաչաղութեամբ ընդդէմ այնոցիկ, որք 'ի հոգս իւրեանց հանդիսանան. այլ որ անօրինելոցն է՝ անօրինեսցի. և որ բարկանալոցն է՝ բարկասցի կարճմտութեամբ և նախանձու զինեալ վշտով. զի տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան յիւրաքանչիւր միտս որոշեալս և զանազանեալս. որ քննէ զսիրտս և զերիկամունս: Այլ ինձ բանս յառաջեսցի, և սուրբքն պատուեսցին գովութեամբ, և Աստուած փառաւորեսցի:

Եւ զի քահանայական է տօնս, քահանայից և խրախութիւնս. համազգեաց խնդութիւնս, հովուապետաց հանդէսս. վասն որոյ մանաւանդ պատուելի է 'ի մէնջ. զի մերազնեայք գոն կոչնատէրքս. և առաւել երախտաւորք հովիւքս սուրբք. հարք հոգեւորք, ծնօղք բարեփառք. առաջնորդք յաջողակք.

նուաստիք իմաստունք , հանդիսա-
դիրք նորահրաշք . արբանեակք
երանաւէտք` բազմադիմի երկամբք
ծնանելով , և մեծագոյն սիրամբն սը-
նուցանելով զորդիացելոցս անձինս ,
հաստատելով վերստին 'ի յոյսն
կենդանի :

Եւ արդ զի՞նչ հատուցումք փո-
խարէնս երախտեաց հարցդ հոգե-
ւորաց . կամ զորպիսի՞ տրիտուրս
տացուք ընդ մեծագոյն վաստակոց
աշխատելոցն 'ի մշակութիւնս հո-
գեւոր գործոց . զի թէ զամենայն
սուրբս պատուել պատուէր ընկա-
լաք , որչափ ևս առաւել զհա-
մազգի առաջնորդս մեր և զծնօղս
զմեզ հոգեւոր շնորհիւ . զի թէ
յընտանիս հաւատոյ հրամանն առաք
գթալ , և զանկն ոչ դարձուցանել 'ի
զաւակէ ազգատոհմի ըստ գրեցե-
լումն , ապա քանի՛ ևս հարց մերոց
հոգեւորաց պարտիմք շնորհակա-
լուք լի՛նիլ տօնասիրութեամբ գթա-
ծաբար , զի մի դատեցիմք ընդ ապե-
րախտիցն և ընդ անշնորհակալու բա-
րեկրելոցն : Զի ոչ կարելն 'ի գոր-

ծառայութեն ըստ արժանոյն՝ 'ի տկա_
րութենէ ստացաւ լինել անձին. իսկ
ոչ կամելն ձեռնամուխ լինել ըստ
բաւականին , յանհաւատութենէ
սասուգեալ եղեւ. այլ հաւատով և
սիրով յօժարելն՝ հաճոյ է Աստու_
ծոյ և սրբոց իւրոց. և թէ այս այս_
պէս է հաւատալ՝ որպէս և է իսկ,
աղա բարւոք է, քան 'ի քուն թան_
ձրութեան խորդալ ծուլութեամբ,
աշխատասիրութեամբ յօժարամիտ լի_
նել 'ի գործ. և ըստ այսմ սարասի
ձեռնամուխ լինիմք յիրս. թէպէտ
և կասեալ գտանիմք յարժանեացն.
զի քան զոր տայ Աստուած՝ առա_
ւել ոչ պահանջէ. և ոչ սուրբքն
եպերեն զըստ կարողութեան հան_
դիսացեալն. այլ սիրով հաճու_
թեան ընդունին և վարձս հատու_
ցանեն ։

Եւ արդ որովհետեւ զպատ_
ճառան 'ի բաց մերժեցաք զպատճա_
ռասիրաց, եկայք այժմ սիրելիք՝
մտաց աչօք յառաջեցուք 'ի հանդէս
սրբոցն. և դիտեսցուք որչափ և է
կարողութիւն՝ զերանելեացն զմե_

ծութիւն շնորհին. Թերեւս կարա-ցուք փոքր 'ի շատէ ընծայաբեր լի-նել սրբոցն. զի կոչնականքս մեզ ա-ւուրս հանդիսի եւ պատճառք ժո-ղովոյս՝ ոչ մի ոք կամ երկուք 'ի հարց բարեփառաց, այլ յոլովից վեհից եւ պատուեցելոց անձինք. հովուաց եւ հովուապետաց հաւա-քումն. քահանայապետից քահա-նայացելոց, եւ պատուով ձօնացե-լոց մեծութեամբ. Արիստակէս եւ Վրթանէս, Յուսիկ եւ Գրիգորիս. ընդ որս եւ մեծն Դանիէլ սքանչելի երեւեալ, յայլասեռ ցեղէ՝ բայց արգասիւք առ այսոսիկ միացեալ: Եւ առքս երանելիքս զորոց զյիշա-տակս տօնախմբեմք, յառաջա-բուղխս աղբերէն յառաջեալք, ան-ձառելի վառակաց բղխմամբ՝ զծարա-ւի անդս մտաց մերոց ոռոգեալք յաստուածային հոսմանցն վտա-կաց: Տունկք տենչալիք 'ի մեծա-գոյն բուրաստանէն բողբոջեալք. բարունակք բեղնաւորք 'ի հայրա-կան որթոյն ուռ շառաւիղեալք. ծաղիկք ծիրանափառք, 'ի ծովայ-

են ծոցոյ ծաղկոցէն ընձիւղեալք . պտուղք գեղեցիկք 'ի բարերը արմատոյն բարուրք բոլորեալք , քաղցրահամք և վայելչագարդք . ցանկալիք և քսամենելիք . արեանատուք՝ հօրն արփիածագ . պերճացեալք պատուով մեհագոյն . Թագակաւոյցք և Թագաւորազունք . բանիբունք և բերկրահամբոյրք . քարոզք պատուիրանին ճշմարտութե , և քաջամարտիկք 'ի պատերազմի ընդդէմ այսոցն չարութեան . խոսեալք առաջի Թագաւորաց ըզվկայութիւն տեառն ամենայն համարձակութեամբ , և նահատակեալք ճշմարտաքարոզ վարդապետութեամբ . քահանայական շնորհիւ պսակեալք , մարտիրոսական հանդիսիւ պայծառացեալք , վկայական անուն ժառանգեալք , 'ի գանձ տեառն յաւելեալք , և յարքայութիւնն երկնից փայլակնանման երեւեալք . դասակիցք դասուց անմարմնոց , և փառաբանիչք փառաց բարձրելոյն ։ Արիստակէս մեծ քահանայապետ , մեծափառ հօրն փո_

խանորդ․ ըստ գրեցելումն՝ Փոխանակ հարց եղիցին որդիք․ ոչ միայն ժառանգ հայրենի պատուոյն, այլ և որբութեամբ վարուց՝ հօրն հաւատարորդ դառեալ․ մանաւանդ թէ և կուսութեամբ առաւելեալ ևս քան զնոյն․ սուսեր հոգեւոր երեւեալ Ճշմարտապէս բանիւ վարդապետութեան․ անակնառու յանդիմանութեամբ՝ յանմտագունից ատեցողաց 'ի վերայ պատուիրանի տեառն խողխողեալ՝ առաքելաբար զմահ ընդունէր, 'ի կաճառս կենդանեացն թեւակոխելով․ զի միշտ կենդանի գոլով Աստուծոյ ըստ տերունեան հրամանին․ յեկեղեցիս անդրանկաց գրելոց 'ի յերկինս 'ի վերինն Երուսաղէմ որ է մայր մեր ամենեցուն․ յազատն 'ի վայրաքարշ վրդովմանց, հուպ առ Երրորդութիւնն․ ուր սերովբէիցն դասք, քերովբէիցն գունդք, աթոռոցն Ջոկք, հրեղինացն հոյլք, Ճշմարտապէս անդ և քահանայապետն մեր սուրբն Արիստակէս․ ուր և փառաւորէ իմանալի ձայնակցու֊

թեամբ ընդ երկնայնոցն դասուց զքահանայապետն Քրիստոս զփառաւորեալն ընդ Հօր և Հոգւոյն անդաւելլի ձայնիւ յաւիտեանն ։

Սա էր 'ի կատարուցման 'ի վիճին հաւատոյ 'ի Նիկիական հարցն հաւաքուածն՝ փոխանորդ հօրն առաքեալ 'ի Հռովմայեցւոց մեծագահութիւնն . մեծափառ և զարմանալի հրաշիւք անդ փառազարդեալ· 'ի մէջ բազմախումբ հարանցն ուղղոց հանդիսաւոր երեւեալ · 'ի վերայ կապուտակ ալեացն լայնատարած լճին լիութեան վեհաւէտ և քասմեածածան կորոզակի սիքաշարժ թանձրութեամբ Ջուրցն Ովկիանոյն՝ սիգաքայլ ոտիւք սրընթացութեամբ սխրացեալ , անվեհեր դիմամբ յիսուսաբար 'ի նկատեալ տեղին հասանէր ։ Ոչ պետրոսօրէն երկմտէր , այլ փրկչաբար խիզախէր ։ Եւ ժողովելոց հարցն բազմութեան՝ սխրալի հիացումն առնէր . և զանդրադարձութիւնն եկաւորութեամբ՝ ոչ տարակուսանօք ինչ հայթայթէր , կամ յառաջար-

կեալ հանդիսին կատէր. այլ նոյնա-
ձեւ օրինակաւ համարձակապէս 'ի
հաստատուն երկիր եղանէր. որ և
հետք հետապնդացութեանն մինչեւ
ցայսօր ժամանակի լուսաշաւիղ ե-
րեւմամբ 'ի վերայ երեսաց Ջուրցն
տեսանի. առ 'ի յիշատակ սրբոյն
սքանչելեաց. և Ճշմարտապէս ամե-
նայն ուրեք 'ի տեսողացն ստու-
գիւ պատմի առանց երկբայութեան
որպէս և է Ճշմարիտ. նա և Թըշ-
նամեաց վկայութեամբ հաստատի
հաւաստեաւ, որ զօրաւոր է յամե-
նայնի. այլ և առուն Աստուծոյ և
տաՃար սրբութեան 'ի տեղւոջն
հաստատեալ, առ 'ի վկայութիւն
հրաշիցն և 'ի հաւատ տեսողաց:
Յորոց հիացմամբ փառս վերառա-
քի հրաշագործողին Քրիստոսի.
զի Աստուած փառաւորեալ է 'ի
խորհուրդս և 'ի բանս և 'ի գործս
սրբոց իւրոց Ճշմարտապէս: Եւ ըղ-
փառաւորիչս իւր փառաւորէ փա-
ռաւորեալն յամենայն 'ի գործս
բարիս որդւոց մարդկան. զորոց
տեսեալ զմեծասքանչ հրաշս ժողո-

վուրդք հաստատեցելոց , փառաւո_
րեն զհայրն երկնաւոր զառուիչն
այնպիսի իշխանութեան մարդկան ։
Սա դառնայր 'ի ժողովոյն Նիկիայ և
դայր յաշխարհս Հայոց մեծաւ
հանդիսիւ , շնորհօք Հոգւոյն սրբոյ
զօրացեալ , հանդունատիպ փրկչին
մերոյ Յիսուսի դառնալոյն զօրու_
թեամբ հոգւոյն 'ի Գալիլեա . և
ելանէր համբաւ զնմանէ ընդ ամե_
նայն կողմանս դաւառաց ուր և
հասանէր . որք ասէին՝ Այս այր է
որ իշխանութեամբ սաստէ հողմոց
և ծովուց ըստ օրինի փրկչին Յիսու_
սի և հնազանդին նմա ։ Նա և այսոց
պղծոց հրամանէ տայ և ելանեն . և
զամենայն ցաւս տապաքինէ 'ի մարդ_
կանէ զօրութեամբ տեառն իւրոյ ։
Որք լուեալ բերէին զամենայն հի_
ւանդս և ախտաժէտս և ընկենուին
առ ոտս նորա և բժշկէր զամենե_
սեան . և տեսեալ բազմաց զեղեալ
սքանչելիսն , տային փառս Ա_
ստուծոյ և ասէին , որպէս լուաք՝
սոյնպէս և տեսաք ։ Եւ այսպիսի
մեծասքանչ հրաշիւք և չքնաղագեղ

Ճոխութեամբ գայր հասանէր յաշխարհս Հայոց, բերելով ընդ ինքեան զգիրս հաւատոյ զեղեալն ՚ի մեծէ ժողովոյն. և մատուցանէր հօրն իւրում սրբոյն Գրիգորի և մեծի Թագաւորին Տրդատիոսի. որք մեծաւ ուրախութեամբ ընկալեալ բերկրէին, և յաւելուին ՚ի նոյն ըստ պատշաճի, խնդրելով ՚ի տեառնէ՝ զի ՚ի նոյնն հաստատուն կացցեն մնասցեն իւրեանց միձանկեալ ժողովուրդս:

Սա կացեալ զկնի հօր իւրոյ մեծին Գրիգորի յաթոռ հայրապետութեանն ամս եւթն, բարուք վերակացութեամբ և ճշմարիտ վարդապետութեամբ յանդիմանելով զչարսն. և որպէս ասացաւ՝ յԱրքեղայոսէ ամբարիշտ բռնաւորէ վասն սաստկագին յանդիմանութեանն՝ սրով զմահ ընկալեալ, հասանէր խնդութեամբ առ Քրիստոս, առ որ անձկացեալն էր ՚ի մանկութենէ. ասելով, Տէր ոչ զոք սիրեցաք յաշխարհի, բայց միայն զքեզ. և թէ, Թողաք զամենայն և եկաք

զկնի քո, և զբանն քո պահեցաք ճշմարտապէս. տուր մեզ զազօրութիւն քո. այսպէս վճարեաց զկեանս սուրբ հոգին մեր. սուգ մեծ թողեալ վիճակելոց իւրոց. որոց վասն աղօթէ միշտ առ տէր ասելով. Զգործս ձեռաց քոց մի անտես առներ:

Իսկ զկնի սորին երանելւոյն Վըրթանէս հայրապետ եղբայր սորա. ոչ միայն ըստ մարմնոյ, այլ և ըստ հոգւոյ եւս՝ առաքինութեան նորին զօրով հաստատեալ, բազմազգի պատուով պանծացեալ. որ և ուղղափառ վարդապետութեամբ զճշմարտութիւն միշտ քարոզելով, հաստատէր եւս կրկին անգամ իւրով յօժարական երկամբք զաթոռն թագաւորական, բարեպաշտութեամբ և ուղղափառ հաւատով զարդարեալ. կայսերական պատուով պանծացեալ, և 'ի պատիւ սրբութեան շքեղացեալ. յառաջադէմ յամենայն գործս բարութեան, արիագոյն 'ի վաստակս առաքինութեան: Զբարեմիտն

յորդորելով 'ի գործս բարիս, և զչարսն յանդիմանելով բանիւն ճշմարտութեան. արդարեւ քանոն հաւատոյ և չափ աստուածպաշտութեան և հիմնադրութեան յամենայնի ճանաչէր. 'ի մարմնի միշտ կենդանի վկայ Քրիստոսի. սպանանելով զանդամս զերկրաւորս ըստ առաքելոյն բանի: Անմարմնաբար ճգնութեամբ, ճշմարիտ քաղաքավարութեամբ, ուղիղ վարդապետութեամբ և բարւոք վերակացութեամբ՝ զանձն օրինակ տալով բազմաց և նպատակ բարեաց զկնի եկելոց, ըղձալի մարդկան և հաճոյ Աստուծոյ:

Յաւելեալ 'ի հարս հայրապետան, 'ի քահանայս քահանայապետոն, 'ի հովիւս հովուին քաջ, որ զանձն իւր միշտ եդեալ էր 'ի վերայ հօտին, 'ի ճգնաւորս անմարմնաբար ճգնեալն. 'ի վկայս՝ հանապազօր մեռեալն աշխարհի. որոյ աշխարհ 'ի խաչ ելեալ էր՝ և ինքն աշխարհի: Ի մարտիրոսս՝ միշտ մարտուցեալն 'ի վերայ պատուիրանացն Աստուծոյ. 'ի

նահատակն՝ հանապազօր նահատակեալն ըստ հաճոյից Աստուծոյ. 'ի մենամարտս՝ բարւոք մարտուցեալն ըստ օրինի տեառն. 'ի սիրելիսն Աստուծոյ՝ միշտ անձկացեալն առ նա սիրով. որ միշտ փափագէր զելանելն 'ի մարմնոյ աստի և զլինելն առ Աստուած. որ հանապազ գոչէր ընդ մեծին Պաւղի բաղձալի սիրով, Ե՞րբ եկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ: Վաղագոյն հրաժեշտ խընդրելով յախտալի կենացս ցանկալին վերնոց, և մեզ յոյս բարեաց առ Աստուած և պարծանս առ մարտնակից մարդիկ. որ և բարեխօսէ միշտ առ տէր վասն հօտի իւրոյ աստ մնացելոց:

Այլ և շառաւեղ սորին սրբութեան մեծայոյսն և յուսոյ ժառանգն. որ յոլովագոյն յուսով յուսայր 'ի յոյսն առաստապարգեւ. յուսով կարդալով զանուն Աստուծոյ զյոյսն ամենեցուն յօգնականութիւն յուսացելոց 'ի յոյսն բարի, Ճշմարիտ քահանայապետն Յոյսն յորջորջեալ. փոխանորդն

հօրն աթոռոյն, և նախանձաւոր նո-
րին սուաքինութեան: Նաև զնա-
խանձ տեառն յանձին կրելով հան-
գոյն մեծին Եղիայի. 'ի վերայ պատ-
ուիրանացն Աստուծոյ նահատա-
կեալ նման մեծին Յովհաննու մր-
կրտչի: Վրէժխնդիր փառաց փրրկ-
չին մերոյ Քրիստոսի, որդւոյն Աս-
տուծոյ վկայ; ճշմարտութեամբ.
հովիւ հոգեւոր՝ հօտին Քրիստոսի,
արդարեւ տեառն նմանեալ, զանձն
դնելով 'ի վերայ ոչխարաց, գորո-
վագութ սիրով հոգայր մեծապէս
վասն փրկութեան հօտին իւրոյ.
դթածաբար գոչէր առ բարեգութն
և ողորմածն Աստուած, Մի մերժեր
զմեզ յողորմութենէ քումմէ. մի
ցրեր զուխտս քո. մի 'ի բացէ առ-
ներ զողորմութիւնս քո 'ի մէնջ. մի
մատներ զմեզ իսպառ վասն ա-
նուանդ քում սրբոյ. այլ զերծո
զմեզ յորոգայթէ որսողին վասն
Գրիգորի սիրելւոյ քո, և վասն
Ռստակիսի ընտրելոյ քո. և Վրր-
թանիսի սրբոյ քո. յիշեա տէր ըզ-
Գրիգոր և զամենայն հեզութիւն

նորա . որպէս երդուաւ տեսան և
ուխտս եդ Աստուծոյ իւրոյ , թէ
ոչ ելից 'ի խորութեան վիրապէս և
'ի միջոյ թունաւոր գազանացս . թէ
տաց քուն աչաց , կամ նինջ արտե_
ւանաց . թէ տեսից զլոյս արեւու ,
մինչեւ զաւետիս ընկալայց փրկու_
թեան ազգիս այսորիկ . թէ բեր_
կրեցայց սրտիւ , մինչեւ գտից զտե_
ղի արկանել հիմն տաճարի տեառն
'ի գաւառիս յայսմիկ : Եւ արդ տէր ,
յիշեա զուխտ վաստակաւորին քո .
և զնեղելոց անձանց պաղատանս մի
անտես առներ . տուր փառս ա_
նուան քում որ փառաւորեալդ ես
յաւիտեան : Ընձինք նեղեալք և հո_
գւք ձանձրացեալք յանօրինաց յա_
րուցելոց 'ի վերայ մեր , աղաղա_
կեմք առ քեզ Քրիստոս փրկիչ մեր .
լուր ձայնի աղօթից յուսացելոցս 'ի
քեզ . և փրկեա զմեզ 'ի հալածչաց
մերոց . զի քեզ փառս վերառա_
քեսցուք ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ :

Այսպիսի գործակցութ սիրովա_
ղօթէր քաջ հովուապետն մեր և արի
երջանիկ ծնօղն ըստ հոգւոյ երա_

նելին Յուսիկ 'ի վերայ ծոծին իւրոյ . այսպիսի արտօսրադոչ պաղատանս մատուցանէր առ Աստուած վասն բանաւոր խաշանց իւրոց . այսպիսի սիրալիր գթով գոչէր առ տէր վասն արագահաս օգնականութեան , շարժելով 'ի գութ զայն որ ոչ երբէք դադարէ 'ի գթալոյ ։ Եւ այսպիսի թախծեալ սրտիւ հեղոյր զանձն առաջի տեառն . և յորդառատ արտասուօք ոռոգէր զերեսս երկրի . որ և այսպիսի աղօթիւք սատակէր զանօրէնն Յուլիանոս զանմտութեամբ յարուցեալն 'ի վերայ եկեղեցւոյ սրբոյ ։ Եւ ինքն որ ըստ օրինակի տեառն զամենեցուն կամէր կեալն և 'ի գիտութիւն ճըշմարտութեան զգալ , փութանակի հասանէր առ թագաւորն , թերևս կարասցէ շահել զփրկութիւն ոգւոյ նորա ։ Եւ անդ 'ի ձեռն առեալ զխրատ վարդապետութեան իւրոյ , բազում ջանիւ հնարէր դարձուցանել զնա յապարասան բարուցն զոր ստացեալն էր . յուշ առնելով նմա զտեառն մարդասի-

րութիւն և զերախտիս նախնեացն
և զջանս վաստակոյ նոցին . Ով Թա֊
գաւոր , ասելով , ընդէ՞ր անմտանաս
'ի քրէական մեղս յանդգնելով . Ե֊
կեղեցի գնեալ է պատուական ա֊
րեամբն Քրիստոսի , և քարինք սո֊
րա շաղախեալ են 'ի կայլակահոս աղ֊
բերէ կողից նորա . և շինուած յար֊
կի սորա առաքելովք և մարգա֊
րէիւք հիմնացեալ է . հայրապետաց
և վկայից կատարմամբ աւարտեալ
է . հրեշտակաց բնակարան և մարդ֊
կան քաւարան խոստովանեալ է .
Աթոռ աստուածութեանն 'ի սա
կառուցեալ է . զնորածնեալսն՝ որ֊
դիս Աստուծոյ առնէ . զամուսնա֊
ցեալսն՝ ողջախոհութեամբ զարդա֊
րէ . զննջեցեալսն հաղորդս առնէ
տեառն արքայութեան ։ Չի՞մ առ֊
նես զսա տեղի և բնակարան դիւաց .
զիա՞րդ զտաճար Աստուծոյ՝ բա֊
գինս կռոց . ո՞րպէս զյարկս փրկու֊
թեան՝ տեղի կորստեան . ընդէ՞ր ըզ֊
տուն սրբութեան՝ վայրս պղծու֊
թեան . զի՞նչ օգտեցան այնոքիկ որք
այդպէս անմտացան . ո՞ւր են Թագա֊

ւորքն տառաջինք չարագոյնքն և ա֊
պարասանք, որք պաշտօնեայք էին
դիւաց. ո՞չ ապաքէն որպէս զծուխ
պակասեցան, և իբրև զփոշի զոր
տարաւ մրրիկ. և երանի՜ թէ այս֊
չափ միայն. այլ կան և մնան լուց֊
կիք յաւիտենական տանջանացն: Ես
զքեզ կամիմ զի ընդ երկրաւոր թա֊
գաւորութեանդ՝ և զերկնիցն ժա֊
ռանգեսցես զարքայութիւն. և ընդ
անցաւոր փառացդ՝ զանանցն առ֊
ցես փառս: Յիշեա զվէմսն հաւա֊
տոյ զՏրդատիոս և զԳրիգորիոս,
զհաւն իմ և զհաւն քո. ուստի կըր֊
կին կոփեցայք ըստ մարմնոյ և ըստ
հոգւոյ. Նոքա զդիւաձոյլ պատ֊
կերսն խորտակէին, և զմեհեանսն
քանդէին, և 'ի տեղիսն եկեղեցիս
հիմնարկէին: Եւ դու զտաճար Աս֊
տուծոյ բնակարան դիւաց առնես
և տեղի կռոց պատրաստես: Եւ ո֊
րո՞ւմ տանջանաց չիցես արժանի.
կամ ո՞ր գեհեն զքեզ ոչ այրեսցէ.
վասն զի կրկին է ապարասանու֊
թիւնդ. ուրացութեամբ և 'ի սըր֊
բութիւնսն մեղանչես. զի թէ 'ի

վայրաքնակ անեղծս կուսապաշտելն կորուստ է անձին, ապա զո՞ր նե- րումն թողութեան ունիցի որ աւ- անդանոյն Աստուծոյ զպատկերս դիւաց դնիցէ. քանզի զի՞նչ հա- ղորդութիւն է լուսոյ ընդ խաւա- րի. կամ զի՞նչ նմանութիւն է տա- ճարի Աստուծոյ ընդ մեհենեաց։ Վասն որոյ նպաստաւորութիւն մա- տուցանեմ քեզ զգուշանալ 'ի չար յամառութենէդ. զի մի եկեսցէ 'ի վերայ քո բարկութիւն տեառն. զի թէ Բաղտասար արքայ բաբելացւոց՝ որ զսպասս սրբութեան յանարժան տեղիս մատուցանէր՝ չարաչար սա- տակեցաւ, ապա առաւել եւս քեզ լիցի կորնչել, որ զգարշելիսն 'ի սրբ- բութիւնսն մերձեցուցանես. վասն որոյ աղերսիւ հայցեմ և փոխան ա- ղաչեմ ով թագաւոր, մի փութար 'ի քոյին կորուստ։ Մի զերկրաւոր թագաւորի պատկերդ յարգոյ հա- մարեսցիս քան զպատկերդ երկնա- ւորին. յիշեա զի գրեալ է, Ի պատ- կեր իւր արար Աստուած զմարդն։ Մի փոխանակեր զմահկանացուդ

ընդ անմահին , զաւօրեայդ ընդ մշտնջենաւորին . զի այդմ պատկերի նախագաղափարն վաղվաղակի չարաչար ըստ արժանւոյն կործանելոց է . իսկ ոգւոյդ քո կայ և մնայ յաւիտենական պատրաստեալ պաթոռ իւր 'ի դատաստան , առ 'ի մշտնջենաւոր դատել զայնպիսին ։ Վասն որոյ, ով Թագաւոր , զարթիր 'ի թմբրութենէդ որ ոչ է 'ի քնոյ . սթափեաց յարբեցութենէդ որ ոչ է 'ի գինւոյ, այլ վայրի արժանի . հիւանդ ես հոգւով, մի զանմահ մահն մեռանիր . կիսագօս ես առ այժմ, մի բնաւ ապականիր . եկ 'ի զգլխումն փութապէս . ամբարձ յերկինս զաչս քո , նայեաց 'ի բարձունս առ տէր Աստուած քո ։ Ցիշեա զարարիչն որ ստեղծ զքեզ յոչնչէ , որ եհան զքեզ յարդանդէ . որ կերակրեաց զքեզ 'ի մանկութենէ . որ փչեաց 'ի քեզ զչունչդ . որ ետ քեզ զարքայութիւնդ . որ խոստացաւ քեզ զհանդերձեալն եթէ պահեսցես զպատուիրանս . որ իշխանութիւն ունի կենաց և մահու քո .

յիշեա զշնորհս աւազանին որով
լուսաւորեցար · յիշեա զսնունդ
սրբոյ եկեղեցւոյ որով դաստիարա-
կեցար · յիշեա զհաղորդութիւն
մարմնոյ և արեան տեառն որով
քաւեցար · յիշեա զնշանն տէրու-
նական որով կնքեցար յաւուրն
փրկութեան · որով և պահպանեալ
եղեր · որով և փրկութիւն գտեր ·
յիշեա զմիւսանգամ գալուստն յոր-
ժամ ծագի նշան փրկչին 'ի յարե-
ւելից պայծառ քան զարեգակն ·
յիշեա և զդնիլ աթոռոցն , զահեղ
դատաստանն , զիւրաքանչիւր գոր-
ծոց հատուցումն , յորժամ Հայր և
Որդի և Հոգին սուրբ բազմին յա-
թոռ փառաց · և զօրք հրեշտակաց
յերկնից յերկիր հեղուն · մինչ զի
թափուր լինել երկնից 'ի բնակչաց ։
Որպիսի՛ լինիցի ատեանն այն · յոր-
ժամ բանքն սպառին և գործքն
թագաւորեն · յորժամ իւրաքան-
չիւր ումեք յանցանք հրապարա-
կայայտ լինին , և զարհուրեալ դո-
ղան տարրեղէն արարածքս ։ Անդ
զայս ամենայն քեզ յուշ արարից ,

յորժամ զղջասցիս և ոչ օգտեսցիս . Հառաչեսցես և ոչ հասանես . խըն-դրես և ոչ գտանես . զի կոչէի և ոչ լուար . յերկարէի զբանս և ոչ ան-սացեր . վասն որոյ այժմ լուր , մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է . մինչդեռ գոյ յոյս փրկութեան և ժամանակ ապաշխարութեան ։

Անկիր առաջի տեառն արտա-սուօք և աղաչեա զերեսս նորա ա-պաշխարութեամբ . սաս , Մեղայ տեառն , որպէս Դաւիթ . և լուիցես պատասխանի , եթէ՝ Եթող տէր զյանցանս քո . ։ արտասուեա ընդ Պետրոսի և ընկալցիս վերստին ըզ-շնորհս . ընդ Պաւղոսի յուշ արա զանգիտութիւնդ . ընդ մաքսաւորին քաւութիւն խնդրեա . ընդ աւա-զակին գոչեա մեծաձայն , Յիշեա զիս տէր յարքայութեան քում . և լուիցես ժառանգել զդրախտն աս-տուածատունկ ։ Էր օրինակ բազմաց մեղուցելոց և վստահութիւն յու-սահատելոց . որք 'ի քոյդ նայելով 'ի դարձ , գայցեն 'ի զղջումն ապաշ-խարութեան և յուսասցին Թողու-

թիւն գտանել. գոչեա ընդ Մանասէի, Չեմ արժանի հայիլ 'ի բարձրութիւնս երկնից 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. վասն զի կանգնեցի պատկեր և բազմացուցի ըզցասումն անձին իմոյ. և զայլս որ 'ի կարգին. որով հանդիպեսցիս փըրկութեան. ահա ծանուցի քեզ զամենայն ճշմարտապէս որով ապրեսցիս:

Եւ յորժամ ամենայն բանքս այսոքիկ ոչ ազդէին 'ի միտս Թագաւորին, այլ կարծրացուցանէր ըզսիրտ իւր իբրեւ զսալս դարբնաց. և խնոյր զականջսն որպէս իժի և քարբի չարաթոյն գազանացն. և ոչ տայր տեղի Թովչին Ճարտարի, առնուլ դեղ 'ի դեղատուէն իմաստնոյ. յայնժամ զմարգարէականն 'ի կիր արկանէր զհրաման մեծին Դաւթի երանելի սուրբ հայրապետն Յուսիկ. զորոյ զանունն ասել քաղցր է 'ի լսելիսն իմ զօրէն պատուիրանի տեառն առաւել քան ըզքաղցրութիւն մեղու 'ի քիմս ճաշակողաց ըստ հոգեւորգողին. և զինչ գոր-

ծէր երջանիկն 'ի հովուապետս. զսաստ բարկութեանն 'ի ձեռին առեալ իբրեւ զնեցուկս. երկաթեղէնս. և զպատկեր պոռնկին իբրեւ զանօթս կաւագործաց խորտակէր, և տոփելով 'ի վերայ ոտամբ՝ բարբառէր. Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն 'ի ներքոյ երկնից. զի կուռք հեթանոսաց դեւք են. և զի ետ տէր հրաման 'ի վերայ իժի և քարբի գնալ և կոխել զամենայն զօրութիւնս թշնամւոյն: Եւ այսպէս առաթուր հարեալ զգունեալ զարշութիւնն, ընդ ոտիւք արկանէր զիմանալին Դողիադ. զժողովուրդիւր ամբողջ պահելով յաներեւոյթ այլազգեաց: Եւ վանեալ մեծայաղթութեամբ զվիթխարի վիշապն ահագին. զոր օրինակ մեծն Դանիէլ զպարշելին զայն 'ի Բաբելովնի. կամ իբրեւ զԴագոնն զայն 'ի ձեռն սըրբութեան տապանակին առ քանանացւոցն: Ընդ որ ցասուցեալ թագաւորին, զամենայն թոյնս դառնութեան իւրոյ թափէր 'ի նա փու-

Թանակի. անօթ եղեալ սատանայի.
զկամս նորա կատարելով յօժարու-
թեամբ: Եւ հրամայէր ձաղկել զնա
ուժգին. ոչ միայն ըստ Պաւղոսի
քառասուն միով պակաս, այլ մին-
չեւ յոգնս, զի զրաւեսցի 'ի կենաց.
որպէս և եղեւն իսկ: Տոփանաւ
հարեալ հանգոյն եղբօր տեառն
Յակովբայ. որոյ և փառայն հա-
զորդ գտեալ 'ի Քրիստոս. ո՜վ ան-
մասութեան զինուորացն. ո՜վ չա-
րին սպասաւորայն. ո՜վ արքանե-
կաց բանսարկուին: Յորժամ բար-
կանայր Սաւուղ 'ի վերայ քահա-
նայիցն և հրամայէր կոտորել զնո-
սա վասն կերակրելոյն զԴաւիթ,
ոչ առին յանձն սպասաւորքն. այլ
հրաժարէին ամենեքեան ասելով,
Ոչ մխեսցուք զձեռս մեր յօծեալ
տեառն. մինչեւ Դովեկ ասորի պա-
տահէր նոցա հրամանաւ Սաւու-
ղայ. և յորժամ յանգիմանէր Պաւ-
ղոս զքահանայապետն Անանիա
վասն հրամայելոյն հարկանել ըզ-
բերան նորա, և սպասաւորացն ա-
սացեալ՝ զքահանայապետ Աստու-

ծոյ հայհոյես , տաէր . Ոչ գիտէի
եղբարք եթէ իցէ քահանայապետ .
Թէպէտ և գիտէր իսկ . յայտ առ_
նելով . Թէ պատկառել պարտ է յօ_
ծութեան շնորհէն . Նա և տէրն մեր
և Աստուած՝ յորժամ ածեալ լի_
նէր յատեան անաստուածիցն և
հարցեալ յանօրէն քահանայիցն և
համարձակութեամբ տանէր զպա_
տասխանին , ապտակեալ լինէր 'ի
չարին սպասաւորէն և 'ի չար հա_
տուցանողէն ընդ բարւոյ կեցուցչին
իւրոյ . որ և ասէրն իսկ . Ա՞յդպէս
տաս պատասխանի քահանայապե_
տին . և այսպէս ամենայն ուրեք
պատկառէին 'ի պատուոյն ։ Իսկ սո_
քա միայն երեւէին լիրբք և յան_
դուգն , ոչ ունելով զերկեւղն Աս_
տուծոյ և ոչ պատկառելով 'ի շնոր_
հէ քահանայութեանն . այլ զցան_
կութիւնն սատանայի կատարէին
անմտութեամբ 'ի կորուստ անձանց .
զի Նա մարդասպան է 'ի սկզբանէ
ըստ հրամանի փրկչին մերոյ ։ Ա_
ւա՜ղ անմտութեան ազգիս մերոյ .
քանի՜ լուսաւորիչս խաւարեցուցին .

վայրաբնակ անեղծս կուսապաշտելն կորուստ է անձին, ապա զո՞ր ներումն թողութեան ունիցի որ աւ-սեղանոյն Աստուծոյ զպատկերս գիւաց գնիցէ. քանզի զի՞նչ հաղորդութիւն է լուսոյ ընդ խաւարի. կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ ընդ մեհենեաց: Վասն որոյ նպաստաւորութիւն մատուցանեմ քեզ զգուշանալ 'ի չար յամառութենէդ. զի մի եկեսցէ 'ի վերայ քո բարկութիւն տեառն. զի թէ Բաղտասար արքայ բաբելացւոց՝ որ զսպասս սրբութեան յանարժան տեղիս մատուցանէր՝ չարաչար սատակեցաւ, ապա առաւել եւս քեզ լիցի կորնչիլ, որ զգարշելիսն 'ի սրբութիւնսն մերձեցուցանես. վասն որոյ աղերսիւ հայցեմ և փոխան աղաչեմ ով թագաւոր, մի փութար 'ի քոյին կորուստ: Մի զերկրաւոր թագաւորի պատկերդ յարգոյ համարեսցիս քան զպատկերդ երկնաւորին. յիշեա զի գրեալ է, Ի պատկեր իւր արար Աստուած զմարդն: Մի փոխանակեր զմահկանացուդ

ընդ անմահին, զառօրեայդ ընդ մշտնջենաւորին. զի այդմ պատկերի նախագաղափարն վաղվաղակի չարաչար ըստ արժանւոյն կորնչելոց է. իսկ ոգւոյդ քո կայ և մնայ յաւիտենական պատրաստեալ զաթոռ իւր 'ի դատաստան, առ 'ի մշտնջենաւոր դատել զայնպիսիսն։ Վասն որոյ, ով Թագաւոր, զարթիր 'ի թմբրութենէդ որ ոչ է 'ի քնոյ. սթափեաց յարբեցութենէդ որ ոչ է 'ի գինւոյ, այլ վայի արժանի. հիւանդ ես հոգւով, մի զանմահ մահն մեռանիր. կիսագօս ես առ այժմ, մի բնաւ ապականիր. եկ 'ի զղջումն փութապէս. ամբարձ յերկինս զաչս քո, նայեաց 'ի բարձունս առ տէր Աստուած քո։ Յիշեա զարարիչն որ ստեղծ զքեզ յոչնչէ, որ եհան զքեզ յարգանդէ. որ կերակրեաց զքեզ 'ի մանկութենէ. որ փչեաց 'ի քեզ զշունչդ. որ ետ քեզ զարքայութիւնդ. որ խոստացաւ քեզ զհանդերձեալն եթէ պահեսցես զպատուիրանս. որ իշխանութիւն ունի կենաց և մահու քո.

յիշեա զշնորհս աւազանին որով լուսաւորեցար ․ յիշեա զսնունդ սրբոյ եկեղեցւոյ որով դաստիարակեցար ․ յիշեա զհայրորդութիւն Մարմնոյ և արեան տեառն որով բաւեցար ․ յիշեա զնշանն տէրունական որով կնքեցար յաւուրն փրկութեան ․ որով և պահպանեալ եղեր ․ որով և փրկութիւն գտեր ․ յիշեա զմիւսանգամ գալուստն յորժամ ծագի նշան փրկչին 'ի յարեւելից պայծառ քան զարեգակն ․ յիշեա և զդնիլ աթոռոցն , զահեղ դատաստանն , զիւրաքանչիւր գործոց հատուցումն , յորժամ Հայր և Որդի և Հոգին սուրբ բազմին յաթոռ փառաց ․ և զօրք հրեշտակաց յերկնից յերկիր հեղուն ․ մինչ զի թափուր լինել երկնից 'ի բնակչաց ։ Որպիսի՛ լինիցի ատեանն այն ․ յորժամ բանքն սպառին և գործքն թագաւորեն ․ յորժամ իւրաքանչիւր ումեք յանցանք հրապարակայայտ լինին , և զարհուրեալ դողան տարրեղէն արարածքս ։ Ընդ զայս ամենայն քեզ յուշ արարից ,



փակեայ զծով տուաղով. և զթանձրութիւն հոծ և կարծրագոյն խըճողեալ երկրի՝ 'ի վերայ հոսանուտ և լոյծ բնութեան ջուրց հաստատեաց. և որպէս կամի փոփոխէ զամենայն անհնարինս 'ի հնարաւորութիւն։ Եւ արդ որդեակք, լուարուք և 'ի միտ առէք զհրաման պատուիրանի տեառն. որպէս զի բարի լինիցի ձեզ, և ողորմութիւն գտջիք 'ի մարդասիրութեննէն 'ի դէպ ժամանակի։

Զայս և առաւել քան զսոյն քարոզէր և ուսուցանէր երջանիկ հովուապետն Գրիգորիս 'ի մէջ բազմամբոխ ժողովրդեանն այնորիկ, յորդորելով զնոսա 'ի հաւատս, և վարժելով 'ի գիտութիւն ճշմարտութեան. որք թէպէտ և զառաջինն տեղի տուեալ ունկնդիր լինէին քարոզութեան սրբոյ առնն Աստուծոյ, բայց յետոյ հրապոյրս պղտորս և գառնացուցիչս արբեալ սատանայապէս զարժանին վայրի մատուցողաց և ընդունողաց, և կարծրացուցեալ զսիրտս իւրեանց որպէս

զփառաւոնին և զնմանեաց նորին, և զչարեալ չարացն այնոցիկ 'ի չարագոյն հօրէն չարութեան, չարապէս չարչարանօք զչարչարանս սրբոյն հնարէին. կատարելով զկամս չարաթոյն վիշապին, արքանեկին իւրեանց չարութեանն, որ հրապուրէր զնոսա յայնպիսի չարութիւն, Եւ զինչ առնէին. նորահնար իմն չարի գտակ եղեալ. զի հանդիսաւոր և հաշակելի չարութիւն գործեսցեն: Եւ գտեալ 'ի դէպ չարին խորհրդոց. որով յագեցուսցեն զախտ արտմտութեանն, զվայրենի անհութիւն քառաքեաց երիվարաց. որով ստորաքարշ ընթադրութեամբ զկեանս սրբոյն սպառէին, յածեցուցանելով ընդ լայնանիստ մեծութիւն դաշտին. զի խնամով մանրամասնաբար երկարութեամբ գզեսցի մատաղ մարմին սուրբ հովուապետին. յորոյ կարմրագոյն արեանն հեղմանէ՝ անբուսածին քարինք ծաղկէին, և Թանձրագոյն հողն ոռոգանէր, կանաչագեղ բոյսքն ծիրանեգոյն ներկանէին, և խռուա-

ցեալն դալարանայր ։ Եւ մեծ քահանայապետն և երջանիկն յամենայնի՝ արդարեւ նմանեալ տեառն իւրոյ մեծի հովուապետին , աղօթելով վասն հօտին իւրոյ փրկութեան , ոչ միայն ոչ համարեալ 'ի մեղս զյանդգնութիւնն աղերսէր . այլ և ողորմութիւն գտանել 'ի տեառնէ հայցէր ։ Եւ այնչափ ջերմեռանդն սիրով զգութ գորովոյ հաստատուն ունէր , մինչ զի 'ի ստորաքարշ ընթադրութեանն ոչ լինէր կասեցեալ յայսպիսի խնդրոյս . այլ մինչեւ յեղանել շնչոյն զնոյնս աղօթէր . որոյ ոչ լինէր անպատուղ մաղթանք աղօթից սուրբ հովուապետին . այլ 'ի յանկ ելեալ ախրապէս կատարիւր խնդիր հայցուածոց նորին . զի մահուամբն իւրով և կամաւոր չարչարանօքն շահէր զփրրկութիւն նոցա . և հաստատէին 'ի հաւատս Ճշմարիտս ։ Եւ յառնէր յազգէ նոցա թագաւոր բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ . և 'ի խնդիր ելեալ մեծաւ յուսով նշխարաց սրբոյ քահանայապետին , գտա-

ներ՚ի գեւղն Ամարաս. մեծասքանչ հանդիսիւ տօնախմբելով զյիշատակ նորա ցնծութեամբ ամ յամէ ՚ի փառս Աստուծոյ:

Եւ արդ սոքա չորեքին շառաւեղք մեծի հօրն հաւատոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, սերեալք սերտութեամբ ՚ի նմանէն աիրապէս ոչ միայն ըստ մարմնոյ, այլ և հոգեւոր շնորհացն գոլով պտուղք գովելի երկամբք. սիրողք սրբութեան և քարոզք Ճշմարիտ որդւոյն Աստուծոյ. յիւրաքանչիւր ժամանակս պայծառացեալք պանծալի փառօք. առաքեալք առաքողին, և սիրեցեալք ՚ի Ճշմարիտ սիրոյն. քահանայք պատուեալք քաղցրուսոյց վարդապետութեամբ. արեգակունք կողմանցս արեւու, և լուսատուք ՚ի խաւարի նստելոցս. ցնծութիւնք տրամեցելոց, և ժողովողք ցրուեալ հօտից. նարդոսք անուշաբուրիչք. և քրքումք քաղցրատեսիլք. տիեզերաց ծաղիկք, և աշխարհի խնդութիւն. պարծանք քրիստոնէութեան, և պսակք

եկեղեցւոյ . միջնորդք խաղաղութեան , և հաշտեցուցիչք արարչին ընդ արարածս . օծեալք շնորհօք Հոգւոյն սրբոյ , և փոխանորդք ճըշմարիտ օծելոյն . լուսաբաշխ աջով օծանելով զամենեսեան յիւրաքանչիւր աստիճանս , քանոնք հաւատոյ և բարձրացուցիչք եկեղեցւոյ . վարդապետք տղայացելոց , և դաստիարակք զարգացելոց . ոմանց կաթն ջամբելով 'ի Քրիստոս , և ոմանց հաստատուն կերակուր ըստ Պաւղոսի . պարիսպք շրջապատ եկեղեցւոյն Քրիստոսի , և աշտարակք ամրութեան հաւատոյ . 'ի յերկրի խորանակիցք մարդկան , և 'ի յերկինս դասակիցք հրեշտակաց . նաւաստիք ճշմարտութեան , և նաւահանգիստք ալեկոծելոց : Ամուրք հաւատոյ և պարծանք հաւատացելոց . և արդ զի՞նչ եւս ասացից . զի տկարանայ բանս առ 'ի ներբողել զսոսա . ամենայնք յամենայնի , և ընդ ամենայնի ամենայնք եղեալք զամենեսեան լնլով . տունկք տնկեալք տանս Թորգոմեան , և բարունակք

ծաղկեալք յայգւոջ սրբութեան , այսինքն է յեկեղեցի Քրիստոսի . բողբոջեալք բարի արգասիւք 'ի զանազան ծաղկանց հաւաքումն . յօրինեալ պսակք վայելուչ՝ մեծապատիւ փառացն Յիսուսի :

Արիստակէս և Վրթանէս , Յուսիկ և Գրիգորիս , քառակի թուով պանծացեալք հանդոյն չորից տարերց 'ի լինելութիւն լրման աշխարհի . լիացուցիչք լուսով լիապէս . յեգեմաբուղխ աղբերէն յառաջեալք ըստ քառառաջ վտակացն յարձակման , առ 'ի զովացումն ծարաւելոց քառանկիւնի աշխարհի լրման . սիւնք ամրութեան յԱստուած խարսխեալք , միշտ յօգտութիւն հաւատացելոց . չորեքդիմեան կառք իմանալիք ըստ հրաշալի տեսլեանն Եզեկիելի . աթոռք փառաց որդւոյն Աստուծոյ . բարձողք լծոյ բարձրելոյն շնորհի , յորս հանգչի Աստուածն ամենի . փառաւորեալն ընդ Հօր և Հոգւոյն : Ընդ սոսա և մեծն Դանիէլ դասակցեալ՝ երանելին և երջանիկն 'ի հարս . որպէս

տուի՝ աշակերտ եղեալ յառաջա-
գոյն Լուսաւորչին մերոյ սրբոյն
Գրիգորի, և յերկարեալ մինչեւ 'ի
խորին ծերութիւն. տարի գոլով
ազգաւ, 'ի զատական ցեղս որոշե-
լով. բայց համեմատ գոլով սրբոցս,
'ի սրբութեան վարս հաւասարեալ.
որ և յանապատի բնակելով հան-
գոյն մեծին Յովհաննու և Եղիայի,
և այնչափ առաքինասէր վարուք հա-
ճոյացեալ Աստուծոյ՝ և մեծագոյն
շնորհի արժանացեալ յարարչէն,
մինչ զի մեծասքանչ հրաշք և զար-
մանալիք կատարէին 'ի ձեռս նորա
'ի շնորհացն Աստուծոյ. որ զի թէ
հարկ հասանէր 'ի ձմերայնի ընդ
լեռնային վայրս ճանապարհոր-
դել, կամ վերանայր թանձրու-
թիւն ձեանն 'ի ճանապարհէն, և
կամ յափշտակեալ լինէր մարմնով
'ի տեղին յոր և կամէր գնալ սուրբ
ծերունին:

Եւ արդ 'ի ժամանակին յայն-
միկ յորում սուրբն Յուսիկ նահա-
տակեալ լինէր ձաղկմամբ 'ի Տիրա-
նայ թագաւորէն Հայոց ողորածեծ

առնելով զնա, և 'ի կենդանեացն՝ փոխէր յաշխարհն կենդանի՝ արիական վկայն Քրիստոսի, և սուրբն Դանիէլ յայսմ ժամանակի կենդանի գոլով յանապատի, և վասն հռչակելի առաքինութեանն՝ ածեալ լինէր 'ի Թագաւորն, զի կացուսցէն զնա յաթոռ հայրապետութեանն Հայոց՝ փոխանակ սրբոյ Յուսկանն: Եւ խստագոյնս յանդիմանեալ զԹագաւորն և զսպասաւորսն ծերունին սուրբ, 'ի յուշ ածելով նոցա զապարասանութեան գործս իւրեանց. վասն որոյ յաւելեալ 'ի չարիս Թագաւորին զեւս անմտութիւնն, խեղդամահ առնէր զերանելին, ոչ պատկառելով 'ի հրեշտակական վարուցն և 'ի պատկառելի դիմացն. զի Թէ ընդ փայտ գալար զայն առնէին ընդ չորն զինչ լինէր. այսինքն՝ եթէ ընդ սուրբն Յուսիկ որ շառաւիղ գոլով սրբոյ Լուսաւորչին մերոյ և քահանայապետ փոխանորդ յաթոռ նորա, այնպիսի հարուածք անցուցանէին, ապա 'ի սուրբն Դանիէլ, որ ոչ ազ-

գայլին գոլով ըստ մարմնոյ և ոչ յաղթող սրբութեան բարձրացեալ. զիա՞րդ խնայէին ։ Ողբացէք ծառք անտառի և ծաղիկք դաշտի զանմտութիւն ազգիս մերոյ, եւս առաւել զԹագաւորաց մերոց անզգամութիւն. վասն որոյ տայր զվրէժն, անձամբ վճարեալ զպարտս չարեացն յաստիս ընդ մեծագոյն յամառութեանն. վասն զի կուրացեալ լինէր 'ի Պարսից արքայէն, առհաւատչեայ անտի տանջանացն զաստիս ընկալեալ պատուհաս. զի է՝ որոց աստ ներէ Աստուած և անդ տանջէ զչարս, և է՝ զորս աստ և անդ տանջէ, զի մի կարճամիտքն թերասցին ։

Եւ արդ հնգեքին սոքա միաբանեալք 'ի միասին տօնախմբութեամբս, հնգից զգայութեանց մերոց լինին մաքրութիւն, և բարեխօսք միշտ առ Աստուած վասն տօնողացս զյիշատակ սոցա ։ Զի տօնասիրութիւն տօնասիրաց՝ առանց չարչարանաց և նահատակութեան պսակակից առնէ սրբոց

զօծնողս իւրեանց սիրով յուսով և հաւատով ։ Եւ արդ, դուք ինձ, ով աստուածային գլուխք՝ ոչ մի կամ երկու, այլ հնգեքին 'ի միասին պատուեալք. զատկաւ հիւսուածս բանիս յաղքատիմաց մտացս և յանարժան անձնէ՝ սիրով ընկալարուք. Թէպէտ և ոչ ըստ ամենարժեայ մեծութեան ձերոյ, այլ 'ի մենջ ըստ կարողութեան հատուցեալ. և հատուսջիք մեզ յանսպառ ողբերացդ ըստ մեծութեան շնորհի ձերոյ զառատ ողորմութիւն. զի այժմ առաւել ունիք համարձակութիւն բարեխօսել առ որում մերձ էք Աստուծոյ, քան յորժամ 'ի մարմնի տաղաւարէիք ։ Այլ և խնդրեսջիք յամենողորմ տեառնէն աշխարհի զխաղաղութիւն, և եկեղեցւոյ սրբոյ զհաստատութիւն, և մանկանց նորին զմաքրութիւն և զսիրոյ կապակցութիւն, վերակացուաց բանաւոր հօտից զմիաբանութիւն և զուղիղ քարոզութիւն. ժողովրդոց զհաւանութիւն և զանդորրութիւն. և մեք խրախացեալք 'ի հոգեւոր սե-

վանոյ ձերոյ , փառաւորեսցուք ըզՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՑ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆՑ

ԵՐՋԱՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ

ԱՐԻՍՏԱԿԻՍԻ, ՎՐԹԱՆԻՍԻ

ՅՈՒՍԿԱՆ,

ԳՐԻԳՈՐԻՍԻ, ՈՐԴԻՈՑ ԵՒ ԹՈՌԱՆՑ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ



ԱՄԵՆԱԳՈՒԹՆ Աստուած որ ասաց 'ի խաւարի լոյս ծագել, որ և ծագեաց ճշմարտապէս իսկ 'ի սիրտըս մեր 'ի ձեռն երանեալ Նահատակին սրբոյն Գրիգորի, որք նըստէաք 'ի խաւարի և 'ի ստուերս մահու, և ծագեաց այսպէս: Արդ յեւթն և 'ի տասներորդ ամի արքայութեանն Տրդատայ՝ Նստաւ յաթոռ սրբոց առաքելոցն Բարթողումէոսի և Թադէոսի, սրբութեանցն գտեալ քահանայագործող, և ծնող մեր ըստ աւետարանին և նախահայր աստանօր արտադրելով: Յետ այսորիկ ապա գնացեալ եւս ընդ արքային Տրդատայ յաստուածակարգ կայսրն Կոստանդիանոս բազմօք իմն և նազելի և վայելուչ մեծարանօք պատուէ ըզսուրբ հայրապետն իբրեւ զկենդա-

նի մարտիրոս առաջի անկանելով. և աղօթս նուիրականս և օրհնութիւնս 'ի նմանէն հայցելով. և այսպէս զնա պատուաւորեալ, և Տըրդատաւ հանդերձ հանեալ յոսկիապատ կառս, մեծաւ շքեղութեամբ յուղարկէ զճանապարհայն:

Զայսու ժամանակաւ յայտնեալ լինէր Արիոս Աղեքսանդրացի, որ զփառաճանեալ 'ի դիւէ անտի, ոչ գոլ ասէր զՈրդի 'ի բնութենէ Հօր, և ոչ հաւասար նմա և ոչ յառաջ քան զյաւիտեանս 'ի Հօրէ ծնեալ, այլ արարած, և յետ ժամանակի գոյացեալ: Վասն այսորիկ խնկապէս ժողով եպիսկոպոսաց լինի 'ի հրամանէ Կոստանդիանու 'ի Նիկիա Բիւթանացւոց, ընդ որս և մերն Արիստակէս կոչեցաւ. և անդ հոլք երեքհարիւր ութեւտասն ըստ հոգւոյն սրբոյ տուչութեան քակեալ զաղանդն Արիոսի՝ նզովեալ մերժեն զնա 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ: Իսկ նորա զարժանի ամբարշտութեանն կրեալ հատուցումն, և խառն ընդ գարշելեաւն 'ի վայր ըղփորոտին վայթեալ սատակէր:

Իսկ առաջս մերն Նախատակէս զար-
ձեալ գայր, մերձեալ ընդ իւր զար-
ժանորինակալ քաւոն կանոնեալ գլու-
խոյս ժողովոյն. ընդ որ յաւէտ
խորախ լեալ Գրիգորի, յաւելոյր
այլ եւս գլուխս 'ի նոյն' 'ի զգուշու-
թիւն միաձանկելոց իւրոց: Բայց յոր-
ժամ հասանէ եկն Նախատակէս 'ի ժողո-
վոյն Նիկիայ, այլ ոչ եւս յաւել
երեւել սուրբն Գրիգորիոս մինչեւ
ցվախճան իւր. այլ երթայր բնա-
կէր լաւելեայն 'ի Մանեայ յայրսն,
ըստ գրեցելումն թէ ի Նաւահան-
գիստ փութայ նաւ խաղնեալ, և
անձն ժուժկալ' խնդրէ զանապատ:
Իսկ առաջ լուսաւորութեանս մերոյ
Նահապետի սրբոյն Գրիգորի և ա-
ռաքելական աթոռոյն Նախաշաւիղ
ձանապարհք, յիսկզբանց անտի
կալոյ յաթոռ հայրապետութեանն
մինչեւ ցայնվայր, յորում ոչ եւս
յաւել ումեք երեւել, թուին ամք
երեսուն:

Իսկ սուրբն Նախատակէս ժառանգ
հայրենի աթոռոյն, ամենայն իրք
շհետ երթայր սուրբ և արդար վա-

տակոց, ջանացեալ քրիստոսադիր
կիտիւ նուաճել զհօտ իւր 'ի կամս
Քրիստոսի, զոմանս հաւանողակա-
նաւ, իսկ զոմանս բռնաւորականով
կարգով ջանայր պահել յակաստա-
նի, և իբրեւ զսուր ինչ յազդեր միշտ
ունելով զհոգւոյն շարժմունս,
յանդիմանէր զորս գտանէր 'ի
չար գործս հակառակ Հոգւոյն.
ընդ որոց ապա և Արքեղայոս ումն
կուսակալ Ծոփաց աշխարհին, կըշ-
տամբեալ 'ի Նմանէն սակս չար գոր-
ծոց իւրոց, ըստ դիպաց իմն 'ի Ճա-
նապարհի ուրեմն յաշխարհին Ծո-
փաց ժպրհեալ, ոխերիմ միօք
սպանանէ զսուրբն սրով փախըս-
տեայ ինքն գնացեալ յարեւմուտս
Տաւրոսի. զոր ապա բարձեալ ըզ-
նշխարեալ մարմինն նորուն աշա-
կերտացն տարեալ հանգուցին յԵ-
կեղեաց գաւառն, 'ի Թիլն աւանի,
կացեալ յաթոռ հայրապետու-
թեանն ամս եւթն: Ոչ թաղումն
թերեւս զնորայն վարկեալ իմ, այլ
փոխումն յայսմ աշխարհէ յաշ-
խարհն կենդանեաց, ուր ոչ լոի

համբաւ մահու , այլ մշտնջենա-զուարճ ուրախութիւն :

Իսկ զկնի սորա անդրանիկ եղբայր սորուն Վրթանէս յաջորդէ զաթոռ սորուն, որպէս և հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ : Բայց հոգեւոր ճառագայթն մեր սուրբն Գրիգորիոս ամս բազումս կացեալ յայրս Մանեայ վախճանի , անգիտաբար իմն թաղեալ 'ի հովուաց՝ իբրեւ գտեալ զնա 'ի կարգ իմն աղքատաց : Իսկ զկնի բազում ամաց գտանէ զսուրբ մարմինս նորա Գառնուկ ոմն ճգնաւոր աստուածային իմն գոգցես տեսչութեամբ . և տարեալ դնէ 'ի գեւղն Թորդան , յուր իսկ զբօսանաց պարտիզկանն : Զկնի ամաց ինչ աստ և սուրբն Տրդատ արքայ յանհամբուրիցն բարոյ և յանհրնազանդից ճշմարտութեան խարդաւանեալ խորամանկութեամբ և տուեալ նմա արբուցումն մահու . զոր տարեալ հանգուցանեն զմարմին նորա 'ի նմին աւանի 'ի նոյն պարտիզկան , մերձ եղեալ 'ի քնարանս սրբոյն Գրիգորի . որ համե-

մաս ընդ նմա իսկ զամենեսեան ար_
տորոշէր 'ի Ճանապարհաց չարաց
վերակացու երկրորդ լեալ լուսա_
ւորութեանս մերոյ ։

Իսկ մեծն Վրթանէս, մինչդեռ
էր նա 'ի Տարօն գաւառի, 'ի մատ_
րան Յովհաննու մկրտչի և Աթանա_
գինեայ վկայի, մահ սպառնացեալ
լինէր նմա 'ի ծածուկ իմն 'ի բնակ_
չաց Սիմ լերին, ուր վասն ապի_
րատ և անազգամի չար գործոց միշտ
յանդիմանեալ առ 'ի նմանէն լի_
նէին։ Իսկ նորա զգացեալ ապա, և
տեղի տուեալ չարին, գնայ փախս_
տեայ 'ի գաւառն Եկեղեաց, անդ
կալեալ իւր կայեան բնակութեան։
Իսկ յետ մահուան սրբոյն Տրդա_
տայ անօրէնն Սանատրուկ երկրորդ
ազգաւ յԱրշակունի տանէ, զոր
կացուցեալ էր նահապետ Տրդատայ
'ի Փայտակարան քաղաքի, և յետ
մահուան նորա ապստամբութեամբ
բազմաւ Թագ իւր կապեալ. ըստ
ամբարիշտ հրամանի նորա բարբա_
րոս հիւսիսական ազգքն այնոքիկ
զաքանչելի մանուկն Գրիգորիս,

զոր եպիսկոպոս Աղուանից կացուցեալ էին 'ի տոհմէ սրբոյն Գրիգորի՝ սպանանէին ձիախրոխտ ընթադրութեամբ 'ի Վատնեան դաշտին, և տարեալ հանգուցանէին զսուրբ մարմին նորա 'ի գեւղն Ամարաս՝ որ 'ի փոքր Սիւնիս ։

Յետ այսորիկ ապա մեծն Վըրթանէս չոգաւ գնաց առ կայսրն Կոստանդիանոս որդի Կոստանդիանոսի, ըղձակերտութեամբ առ 'ի նմանէն հայցեալ թագաւորեցուցանել Հայաստանեայց զխոսրով փոխանակ հօր իւրոյ Տրդատայ, զի Տիրեցէ մեզ, ասէ, քրիստոսակարգ տէրութիւնդ ձեր, և մի լիցի մեզ տիրել Պարսից անաստուածից • զոր և ողջախոհաբար ընկալեալ զսուրբ այրն, և կատարեալ և զխնդիրն, կացուցանէ թագաւոր Հայաստանեայց զխոսրով ։ Իսկ յետ մահուն Խոսրովայ մեծն Վըրթանէս առեալ ընդ իւր զՏիրան որդի Խոսրովայ, չոգաւ գնայ առ կայսրն Կոստանդիանոս թագաւորեցուցանել զնա փոխանակ հօր իւ-

րոյ։ Իսկ կայսրն ապա ըստ առաջին
նուագին բազմապատիկ պատուով
զնա մեծարեալ և առձեռն պատ-
րաստ զհայցուածսն կատարեալ, ա-
ռաքէ 'ի Հայս պայծառապէս զՏի-
րան Թագաւոր պսակեալ, որ ե-
կեալ տիրէր հայրենի տէրութեանն։
Իսկ ապա անօթն ընտրութեան և
խորհրդածուն խորոցն Աստուծոյ
և առաքելական աւանդից քարոզ
մեծն Վրթանէս լցեալ զկէտ կե-
նացս փոխի յայսմ աշխարհէ յաշ-
խարհն կենդանեաց, կալեալ զա-
թոռ հայրապետութեանն ամս հըն-
գետասան, և տարեալ հանգուցա-
նեն զնա ընդ հարս իւր 'ի գեւղն
Թորդան։

Եւ յաջորդէ զաթոռ նորա Յու-
սիկ որդի նորուն, որ հետեւող
հարցն առաքինութեան գտեալ
հանդիսանայր միշտ 'ի բոլոր բարե-
կարգութիւնս։ Բայց յետ հրաժար-
մանն Կոստանդեայ, Յուլիանոս
անօրէն Թագաւորեալ 'ի Հռովմ, և
հպարտացեալ 'ի վերայ գիտութենն
Աստուծոյ, և կռամոլ գտեալ ու-

բանայր զՔրիստոս , և յարուցանէր հալածանս եկեղեցւոյ ։ Ապա պատանդս 'ի մերն Տիրանայ առեալ , կամակատար իւր զնա կացուցանէր ․ և ապա զպատկերն իւր նկարակերտ , որ ըստ դիւաց պատկերից էր պաճուճեալ , հրամայէ Տիրանայ կանգնել յեկեղեցւոջ իւրում , և վասն զի առ վտանգի երկեւղին՝ իւրովի Տիրան տարեալ զպատկերն կանգնէր յեկեղեցւոջ իւրում 'ի Ծոփս գաւառի ։ Վասն այսորիկ դիմեալ 'ի տեղին սուրբն Յուսիկ , հոգեւոր վարդապետութեամբ որրոհել զնա 'ի չար մտածութենէն հնարէր ։ Իսկ իբրեւ խնոյր լսելիք առ 'ի չլսել , յափշտակեալ ապա զպատկերն 'ի ձեռաց նորա , և ընկեցեալ յերկիր , և տրորեալ ոտիւք 'ի վերայ խորտակէր ․ ընդ որ և 'ի չարութիւն իսկ Տիրանայ բորբոքեալ , հրամայէ հարկանել զնա վարոցօք , մինչեւ անդէն աւանդէ զոգին ։ Իսկ ծերունին Դանիէլ վասն այնպիսի չար անզգամութեան անխծակուր զարքայն արարեալ ,

հրամայեաց ապա և զնա եւս խեղդամահ առնել. զոր տարեալ հանդուցանեն զնա 'ի Հացեաց վանս: Իսկ զմարմին սրբոյ Յուսկանն տարեալ դնեն ընդ հօրս իւր 'ի գեւղն Թորդան, որ եկաց 'ի հայրապետութեան անդ ամս վեց:

Բայց վասն զի որդիքն սրբոյն Յուսկան Պապն և Աթանագինէսն, ըստ որում խաւարեցուցին իսկ զսիրտս իւրեանց անմտութեամբ, ըստ նմին և զսարսափելի մահ անձանց նիւթեցին. զի հրացայտ ցոլմունք 'ի վերայ հասեալ սատակէր զերկոսին 'ի միում տեղւոջ: Մանկիկ մի փոքրիկ Ներսէս անուն միայն թողլով իւր որդի Աթանագինէսն, որ յայնժամ էր 'ի վարժս ուսման 'ի Կեսարիա. և ապա վասն ոչ գտանելոյ այր յազգէ սրբոյն Գրիգորի, ընտրեցին զոմն Փառներսեհ անուն յԱշտիշատէ, և կացուցին զնա յաթոռ հայրապետութեանն. սա ոչ աւելի քան զերեք ամս տեւեալ վախճանի:

ԶԵՆՈԲ ԳԼԱԿ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԶԵՆՈՎԲԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԶՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է ՎԱՍՆ

Ա Ն Տ Ո Ն Ի

ԵՒ

Կ Ր Օ Ն Ի Դ Ե Ա Յ

ԵՒ ԱՅԼՈՑ ՃԳՆԱՒՈՐԱՑՆ



Արդ իբրեւ եղեւ ելանել սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ 'ի խոր վիրապէն, և զայնոսիկ որ դիւագ-նեալքն էին՝ հանդերձ Թագաւո-րաւն բժշկեաց և դարձոյց յաս-տուածպաշտութիւն լուսաւոր վար-դապետութեամբն իւրով, և 'ի հրամանէ Աստուծոյ ձեռնադրեցաւ 'ի սրբոյն Ղեւոնդէ մեծէ, և հի-մնարկեաց զեկեղեցին զոր իմ աւե-

լի անուանս 'ի վերայ եդի՝ Գլակայ
վանք ․ եթող անդ պաշտօնեայս
եկեղեցւոյն զԱնտոն և զԿրօնիդէս
միայնակեացսն, զորս 'ի Կեսարիայէ
ածեալ էր ընդ իւր ․ և զաշակերտն
նոցա զԵպիփան հայր հաստատեաց ․
և եթող 'ի տեղւոջն կրօնաւորս քա-
ռասուն և չորս ․ և երկոտասան դաս-
տակերտս եկեղեցւոյն 'ի ծառայու-
թիւն կարգեաց ։ Եւ ինքն գրեաց
թուղթ առ Ղևոնդ հայրապետն
Կեսարիոյ, այսպէս ․

Զառ 'ի յաստուածուստ պա-
տուեալ և 'ի մարդկանէ փառաւո-
րեալ տեառն և աստուածարեալ
հայրապետիդ Ղևոնդեայ Մեծա-
ղու Կեսարեայ հոյակապ քաղաքի,
որ 'ի ձերոյ սրբոյ ձեռնադրութե-
նէդ և 'ի մեր փանաքիմացութեանցս
առաջին թուղթ ողջունի և սրբու-
թեամբ հասցէ ․ որով միշտ զխաղա-
ղութիւն պարգևեսցէ նախ ձե-
րում փառաւորութեանդ և ապա
բոլոր տիեզերաց ։

Յոյժ գոհանամք զԱստուծոյ որ հայրախնամ ողորմութեամբն իւրով գթացաւ յազգս մարդկան իջմամբ Որդւոյն իւրոյ միածնի, որ զամենայն ազինս հրաւիրեաց յերկնային քաղաքն 'ի ձեռն առաքելական քարոզութեանն. յորմէ և այս աշխարհի կարի առաւել մասն պարծանաց եհաս. զի երկոքեան ամոլքն աստ կատարեցան ըստ բաժնի Հոգւոյն սրբոյ. որ թէպէտ և առ նոքօք վերջացան 'ի ճշմարտութենէն, սակայն ողորմութիւնն Աստուծոյ գթացեալ և առ մեր նուաստութիւնս, 'ի մերում ժամանակի կամեցաւ և գործեաց զսքանչելիսն, զոր դու իսկ լուար 'ի մէնջ և ծանեար: Մանաւանդ կրկին իսկ գոհութիւն Աստուծոյ մատուցանեմք, առաւել և ձեզ օրհնութիւն, զի զգանձն կենաց աննախանձ շնորհեցէք աշխարհիս Հայոց, զմիջնորդին Աստուծոյ և մարդկան զսրբոյ Կարապետին Յովհաննու զնշխարսն, որով ցնծաց աշխարհս Հայոց սորա

գալստեամբս , որպէս Յորդանան Քրիստոսի գալստեամբն ։ Եւ զայն գիտութեան աղագաւ ձեզ ծանուցանեմք․ զի որպէս Քրիստոսի իջմամբն 'ի Ջուրն՝ մահ կորեաւ․ սոյնպէս և աստ 'ի սորա գալստեանս , զի գժոխոց դրունք բնաւ փակեցան ։ Զ.ի է սա աստ յերկրիս Հայոց 'ի յերրորդ աւարտին լերինն՝ որ կոչի Տորոս , և հատեալանցանէ մինչեւ 'ի դուռն Պահլաւ Պարսից․ և առ նովաւ բնակին երկիրն Մամիկոնէից բազում վայելուչ տեղօք և առատատու պտղոյիւք․ որ և որջացեալ էր մահ յերկուս տեղիս․ ուստի և հրամանաւ Հոգւոյն ձեռն 'ի գործ արկեալ՝ կործանեցի զպատկերսն սատանայի , և եդի 'ի մատենի անխախտելի վնչխարս սրբոց վկայիցն , որ և այժմ պատուեալ երկրպագի ։ Իսկ զերկուս կենդանի վկայսն Քրիստոսի զոր դու յղեցեր ընդ իս զԱնտոն և ըզԿրօնիդէս Թողի 'ի տեղին ուր Գիսանէսն կործանեցաւ․ զոր տեղի Իննակնեան նոր կոչեն ։ Որոց կէտ

եդեալ զվարս իւրեանց յաշխարհի, զի խաչեալ իսկ են ընդ մարմինս իւրեանց ընդ Քրիստոսի և արդ միան վասն բազմաց փրկութեան. զորս իբրեւ զանգիւտ մարգարիտս համարիմ զնոսա առեալ ինձ։ Բայց վասն մտերմական սիրոյդ զոր ունիս ընդ իս, աղաչեմ զի զմիւս այլ ընծայն շնորհեսցես. զի հունձք բազում հասեալ են 'ի Քրիստոս, բայց զքեզ իբրեւ զճշմարիտ տէր մշակաց, զի հանցես մշակս 'ի հունձս յայսոսիկ։ Յորոց մինն 'ի քաջ մշակաց զոր ես խնդրեմ 'ի քէն՝ Եղիազարոս Նիւստրիացւոց եպիսկոպոսն՝ որ է եղբայր Զենոբեայ եպիսկոպոսի, զոր ընդ իս ածեալ ձեռնադրեցի երկրիս Մամիկոնէից։ Արդ և զդա յղեսցես հանդերձ այլ մշակօք մանկտուովք. մանաւանդ թէ զՏիմոթէոս Ադոնացւոց եպիսկոպոս յղեսցես, զոր դու իսկ գովէիր զհմտութիւն դպրութեանն, որ յոյժ պիտանի է երկրիս այսմիկ. որով օգնութիւն գտեալ 'ի քէն աղօթից և խնդրուածոց, ուստի յա-

րաժամ ճգնութեամբ՝ բազմաց օրի-
նակ գոլով դաստիարակելով շը-
նորհիւն տեառն ։ Ողջ լիցիս վասն
բազմաց փրկութեան 'ի տէր ն մե-
րոյ բարեխօսութեան յապառնին
և 'ի ներկայս ։



ՊԱՏԱՍԽԱՆԻ ՊԱՏՄԱՆԱՒՈՐ ԳՐՈՑ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ, ԶՈՐ ՅՂԵԱՑ ԿԵՍԱՐՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆ Ի ԺԱՄ ՎԱԽՃԱՆԻՆ

Երջանիկ և աստուածարեալ տեառնդ եղբօր և արոռակցիդ

Եհաս առ մեզ գիր ուրախարար, և յոյժ անթերի ուրախութեամբ լցեալ կազդուրեաց զվշտագնեալ անձն իմ. որ թէպէտ և 'ի տրտմութեան էի վասն իրիս հասելոյ, սակայն շարժեաց զմերս գանգագութիւն ձեր գոհութեան նամակդ. զոր ես առաւել գոհութիւն մատուցանեմք Աստուծոյ ըստ գրեցելոյդ 'ի քէն. որ ոչ անտես արար զձեզ յիւրմէ սքանչելի ողորմութենէն. որք բազում ժամանակս մոլորեալք ընթացան ընդ խաւար կռապաշտութեան՝ 'ի ճանապարհէ երկնային պողոտային. 'ի դէպ

եկեալ նոցա մարգարէութեանն բան, թէ ժողովուրդ որ նստէին 'ի խաւարի անգիտութեան՝ տեսէք զլոյս մեծ։ Զի թէպէտ և վաղ ծագեաց արեգակնն արդարութեան, սակայն ազգդ քո իբրեւ 'ի մէջ գիշերի շօշափէին զորմ կռապաշտութեան. յորս հայեցեալ Աստուած էջ 'ի փրկել 'ի ձեռաց անմարմին Փարաւոնին, կրկին մովսէսեան գաղափար զքեզ տուեալ դոցա յամստուածակոյս կողմանն. և դու ընտրեցար դոցա 'ի տեղի սուրբ առաքելոցն Բարդողոմէոսի և Թադէոսի. յիշեա զնոցա նահատակութիւնն և մի երբէք վերջանար 'ի շաւղաց նոցա՝, զոր եւ քեզ տէր 'ի շինել և ոչ 'ի քակել. և չիք ինչ պատճառ. զի և մուտ որբոյ Կարապետոսի սկիզբն է շինութեան։ Բայց աղաչեմ մի մոռանար և զիմ երախտիքդ զոր արարի ձեզ. զի և ես օրհնութեան գտայց արժանացեալ։ Եւ զտեղիսն Իննակնեան՝ զոր ոմանք Բարեբուխ կոչեն՝ կացո կրօնաւորք և վանք շինեա ըստ օրինակի

այսց կրօնաւորացս զոր տեսեր 'ի մեր աշխարհիս . և 'ի սորայն Անտոնէ առաւել ուսցիս զվարս ճգնութեն , որ ոչ ինչ պակաս է 'ի հրեշտակաց : Եւ զԵպիփան աշակերտդ Անտոնի հաւանեցուցի գալ առ ձեզ , ունելով ընդ իւր արս քառասուն ճգնաւորս և խարազանազգեստս , պարկեշտք 'ի վարս և հրաժարեալք յաշխարհէս . զոր առնել կացուցես զԵպիփան հայր վանացդ . Ձեռնով-քայ : Դրօշմեաջիր արձան յաւիտենից , զի մի ոք 'ի դաստակերտս կամ 'ի գեղաքաղաքս զորէն Աղեքսանդրացւոցն գործեսցէ , շինելով իւրաքանչիւր ումեք խրճիթս շուրջ ըզտէրունեան տաճարաւն , և առանձինն բնակել աղաչեմ մի տար հրաման , այլ ժողովել 'ի մի տեղ հարիւր արանց չափ . և որոշեսցես նոցա դաստակերտս և աւանս , որպէս զի պէտք վանացն 'ի նոցանէ վճարեսցին , և ինքեանք միայն աղօթից և ճգնութեն պարապեսցին : Խրատես և զիշխանս լինել աղքատասէրս և ողորմածս : Իսկ զշինուածս

մատրանն մի՛ չքննեսցես կրօնաւո-
րանոցս, այլ կացուսցես անդ քա-
հանայս և քորեպիսկոպոսս, և որո-
շեսցես նոցա դաստակերտս դարմա-
նիչս աղքատաց և որբոց: Բայց մեզ
աղօթս արասցես, զի յերեւել ճըշ-
մարիտ հովուապետին՝ ընկալցուք
զերկնից պսակն: Ողջ լերուք 'ի Տէր:

Եւ տուեալ զպատասխանիսն թե-
րին առ սուրբն Գրիգոր. իբրեւ
լուաւ՝ ուրախ եղեւ յոյժ:

Եւ յետ ժամանակաց ինչ լուր
եհաս 'ի դուռն արքունի, եթէ Կոս-
տանդիանոս կայսր հաւատաց յԱս-
տուած, և դադարեցոյց զհալա-
ծումն յամենայն եկեղեցեաց: Ապա
խորհուրդ 'ի մէջ առեալ գնալ 'ի
դուռն կայսեր վասն դնելոյ դաշինս
'ի մէջ իւրեանց. և իբրեւ եկին և
յանդիման եղեն Տրդատ Գրիգորիւ
հանդերձ 'ի դուռն ծիրանափառ
Ոգոստեայ, և եդին զդաշինսն 'ի
միջի՝ վկայիւն Աստուծոյ մեծի
խոստովանողաւն և երանելեաւն

Սեղբեստրոսի հանդերձ Քրիստոսի հաւատացելովքն՝ զոր ընկալան 'ի տեառնէ ։ Եւ յետ աւուրց բազմաց ելեալ 'ի Նմանէ մեծաշուք պատուով ընդ իւրեանս ունելով ըզգանձն աստուածային, զոր ետ արքայն Կոստանդիանոս զահեակ ձեռնն Անդրէի առաքելոյ, և այլ ինչ 'ի Պետրոսէ և 'ի Պաւղոսէ ։

Եւ յորժամ եկին յԵկեղեաց գաւառն՝ կատարէին զյիշատակ Կարապետին որ յետ պենտեկոստէին, զոր 'ի Նաւասարդի 'ի մին էր կարգեալ. բազում ցնծութիւն և ուրախութիւն աղքատաց և պատժապարտաց արձակել 'ի բանտից շնորհեաց ։ Եւ իբրեւ եկին 'ի տեղին Իննակնեան, խնդիր արարին սրբոցն Անտոնի և Կրօնիդեայ ։ Իսկ պաշտօնեայքն ասեն. Այս ամ մի է զի ոչ եմք տեսեալ զնոսա ։ Եւ տրտմեցաւ Թագաւորն յոյժ, զի 'ի վաղնջուց ցանկայր տեսանել զնոսա ։ Իսկ սուրբն Գրիգոր առաքեաց խնդրակս զԱղբիանոս եպիսկոպոս 'ի խուցս նոցա հանդերձ եր-

կու սարկաւագօք , տուեալ նոցա
խրատ թէ Յառաւօտուն պահուն
ելանեն յանտառէն 'ի բլուրս ու-
րեք , և դուք անդ կացէք զգոյշ , զի
մի զձեզ տեսեալ փախիցեն ։ Եւ զա-
ւուրս չորս ոչ կարացին գտանել ·
իսկ 'ի լուսանալ աւուրն հինգերոր-
դի՝ լուան զձայն սաղմոսերգութեն
նոցա , զի գային յանտառէն յարե-
ւելից կուսէ 'ի քաղցրահամ աղբե-
րէն · և եկին 'ի բլուրն երեւելական
տեղւոյն Արարից Դեմետրեայ , զոր
կոչեն Արեւու բլուր · զի անդ էին
գալարափոր խցկունք նոցա ։ Եւ իբ-
րեւ մերձեցան 'ի գլուխ լերինն ,
սկսան սաղմոսել այսպէս · Լսելի
արա ինձ առաւօտուց զողորմու-
թիւնս քո , զի ես 'ի քեզ տէր յու-
սացայ ։ Իսկ Աղբիանոս ասէ · Հոգի
քո բարի առաջնորդեսցէ ինձ յեր-
կիր ուղիղ ։ Եւ աղօթեալ անդ ասէ
Անտոն ցԱղբիանոս · Բարի եկիր
Ճանապարհորդ խաղաղութեան ։
Իսկ նա ասէ · Բարի և խաղաղու-
թիւն ընդ ձեզ մշակքդ Աստուծոյ և
օթեվանք հոգւոյն սրբոյ · այլ և ա-

ւտեսիք ձեզ, զի սուրբն Գրիգոր և Տրդատ 'ի բնակութիւնս ձեր եկն և յոյժ խնդրեն զձեզ: Իսկ նոքա ասեն. Նաև ձեզ եւս տալ ուրախութիւն և աւետիք, զի այսպիսի բարիք Աստուած 'ի ձերում ժամանակի. յայտնեաց, և զաստուածոյ կործանեաց, զհոգեւոր խաղաղութիւն աշխարհի պարգեւելով արարչին յաւիտենից: Եւ իսկոյն առաքեաց Աղբիանոս զարկաւագունսն առ հայրապետն աւետաւորս: Եւ սուրբն Գրիգոր առաքեաց առ Տրդատ աւետաւորս 'ի սոորոս Արձանին զնոյն սարկաւագունսն: Որ յոյժ ուրախութեամբ լցեալ եկն 'ի վանսն հանդերձ գլխաւորօքն. իսկ զանգիսն ուր զաւետիսն եատուն՝ հրամայեաց վէմս ժողովել, զոր և կոչեմք Աւետեաց խաղ:

Իսկ սրբոյն Գրիգորի առեալ ըղգասս պաշտօնէիցն, զանատասն հնչեցուցանէր. իբրեւ մերձ եղեն 'ի բլուրն՝ նոքա ընդ առաջ գային. և միաբանեալ 'ի բլուրն աղօթեցին:

Եւ յետ ողջունին առէ սուրբն Գրիգոր. Բարեոք գտաք զձեզ և խաղաղութեամբ առաւօտք բարեաց: Իսկ նոքա ասեն. Բարի եկիր արուսեակդ արդարութեան, որ զտիեզերս լուսաւորես. մշակ առանց ամօթոյ և աշտանակ բարձրագոյն քան զերկինս: Եւ կարգացաւ անուն տեղւոյն Աւետեաց բլուր: Եւ իբրեւ եկին յեկեղեցին, հանդիպի նոցա թագաւորն, և հայցէր օրհնել 'ի նոցանէ. և յարուցեալ համբուրեաց զնոսա, և նստան առաջի վկայարանին: Եւ նոքա բազում վարդապետութեամբ խօսէին ընդ նոսա, և ուսուցանէին զսրբութեան կրօնան: Իսկ թագաւորն մեծ գոհութիւն Աստուծոյ մատուցանէր: Եւ կացեալ 'ի տեղւոջն զաւուրս տասն և հինգ, ապա յետ այսորիկ դնաց 'ի բուն կայանսն արքունի 'ի Վաղարշապատ քաղաք:

ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆՆ ԱՆՏՈՆԻ ԵՒ ԿՐՕՆԻԴԵԱՑ

Զենոբ եկաց հայր Գլակայ վանացն զամս քսան։ Յետ մահուանն Զենոբայ եպիսկոպոսի՝ յաջորդէ զաթոռ նորա Եպիփան աշակերտն Անտոնի ամս երեսուն. ՚ի սորա տասն ամին եկն սուրբն Գրիգոր առ Անտոն և Կրօնիդէս բնակել առ նոսա յանապատին. իսկ նոքա հանին անտի ասելով. Գնա յանծանօթս ուրեք, զի մի աստ փառաւորութիւն մատուսցեն քում սրբութեանդ։ Իսկ նորա երթեալ բնակեցաւ ՚ի Մանեայ այրս, որպէս ասի լինել անդ ամս եօթն, փոխի առ Քրիստոս։ Ստեփանոս աշակերտ Եպիփանու ամս հնգետասանս. ՚ի սորա չորրորդ ամի վախճանեցաւ սուրբն Անտոն. և յետ երկրորդ ամսոյ սուրբն Կրօնիդէս, կացեալք ամս քառասուն յԻննակնեան վանսն, սակաւ ինչ հեռագոյն յեկեղեցւոյն ըստ հարաւոյ կուսէ։

ՑԱՆԿ

Ժ. ՀԱՏՈՐՈՑ